Azg Ազգ

2 ՄԱՐՏ 2007 ՈՒՐԲԱԹ 39 (3691)

«Թուրքիան ասիական երկիր է, չի կարող անդամակցել ԵՄ-ին»

Փետրվարի 28-ին մամուլի ասուլիսում այդ մասին հայտարարել է Ֆրանսիայի ներքին գործերի նախարար Նիկոլա Սարկոզին, որը առաջիկա նախագահական ընտրություններում համարվում է Ժակ Շիրակի պաշտոնի գլխավոր հավակնորդը:

Ասուլիսին, ինչպես տեղեկացնում է CNN-Turk-ը, Սարկոզին, անդրադառնալով Վաշինգտոնի հետ պաշտոնական Փարիզի փոխհարաբերություններին, ընդգծել է, որ Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության հարցին Ֆրանսիայի մոտեցումը էապես տարբերվում է ԱՄՆ-ի մոտեցումից: Նա ասել է. «Նախագահ Բուշը ամեն կերպ ջանում է, որ ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան ընդգրկվի ԵՄ-ի կազմում: Նա ընդգծում է դրա կարեւորությունը: Սակայն ես բոլորովին այլ կարծիքի եմ: Իմ խորին համոզմամբ, իբրեւ ասիական երկիր, Թուրքիան չի կարող դառնալ ԵՄ-ի անդամը: Պետք է, որ ԵՄ-ն ունենա իր սահմանները: Առանց սահմանի անհնար է պահպանել այս կառույցի գոյությունը»:

Հ.Ղ.

Տունը արբություն է, այն բռնագրավելը՝ իշխանությունների մոլուցք բոլո՞ր երկրներում

ՖՈՏՈԼՈՒՐ

Բնակարանային վարձավճարների հարցը համամարդկային խնդիր է դառնում ոչ միայն Երեւանի կենտրոնի բնակիչների համար: Ինչպես երեկ հաղորդեցին միջազգային լրատվական գործակալությունները, Կոպենհագենում մեծածավալ անկարգություններ եւ բախումներ են եղել ոստիկանների հետ: Կոպենհագենի կենտրոնական շենքերից մեկի՝ երիտասարդական տան բնակիչները եւ նրանց մեծաթիվ կողմնակիցները աղբարկղերից եւ շինանյութերից բարիկադներ են կառուցել՝ պաշտպանելու շենքը կրոնական մի կազմակերպության հանձնելուց: Մինչ ուշ գիշեր շարունակվել է նրանց ընդվզումը: Ի վերջո, բնակիչներին բռնի կերպով տեղահանել են զրահամեքենաներով: 75 մարդ ձերբակալվել է, կա մեկ վիրավոր:

Ի տարբերություն հայրենի իշխանությունների ձեռքով բռնի տեղահանվող դանիացիների, հայ բռնի տեղահանվողները ի դեմս ընտանիքի ավագ, 60-ամյա, երկրորդ կարգի հաշմանդամ Սամվել Ղարիբյանի, առայժմ լրագրողների մոտ գանգատվելով եւ առողջական վատթարացմամբ են արձագանքում: «Ա1+» լրատվական գործակալության աշխատակցին Ղարիբյանները պատմել են, որ «իրենց թեւից բռնել ու դուրս են շպրտել տնից՝ պատճառելով մարմնական վնասվածքներ»: Հատկանշական է, որ «հանրային գերակա շահի» համար ընտանիքից վերցվող տարածքը արդեն տրվել է «Ասատֆյան» համալիրին: Պակաս խոսուն չէ հանգամանքը, որ Երեւանի կենտրոնական փողոցի բնակարանը (շուրջ 200 քմ) գնահատվել է ընդամենը 25 հազար ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Ըստ մեր տեղեկությունների, վտարված Ղարիբյանները դիմելու են դատախազություն: Հետո ինչ:

Ս. Մ.

ԱԵԳԼԻՍԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

«Էկոնոմիստ» Բաքու-Թբիլիսի-Ախալքալաք-Կարսը Հայաստանի մեկուսացման խորացման աղացույց

Բաքու-Թբիլիսի-Ախալքալաք-Կարս երկաթուղու նախագծում Հայաստանի բացակայությունը, բրիտանական «Էկոնոմիստ» հանդեսի հրապարակմամբ, աղացույց է Հայաստանի մեկուսացման խորացման: «Էկոնոմիստի» վերլուծական կենտրոնի Հայաստանին վերաբերող փետրվարյան զեկույցում նշվում է, որ Հայաստանը հերթական անգամ դուրս է մնացել տարածաշրջանային տնտեսական նախաձեռնությունից: Զեկույցի համաձայն, երկաթգծի շահագործումը հնարավորություն կտա Ադրբեջանից Թուրքիա տեղափոխել տարեկան մինչեւ 500 մլն տոննա ապրանք, ընդ որում Ադրբեջանը, Վրաստանն ու Թուրքիան արդեն իսկ սերտորեն համագործակցում են Կասպից ծովի էներգակիրներին Թուրքիա հասցնելու հարցում: Եվ չնայած Միացյալ Նահանգներում հայկական լոբբիի օգնությամբ հնարավոր եղավ նախագիծը զրկել ֆինանսավորումից, «Էկոնոմիստը» գտնում է, որ փակ սահմաններով եւ սեփական էներգակիրներից գրեթե զուրկ Հայաստանի համար խորանում է կախվածությունը Ռուսաստանից: Վերջինս էլ երբեմն անտեսում է Հայաստանի շահերը, օրինակ՝ փակելով Վրաստանի հետ սահմանը:

Բրիտանական հանդեսը Ռուսաստան-Հայաստան հարաբերությունների համատեքստում հարցադրում է անում՝ Լեռնային Ղարաբաղը վերադարձնելու համար Ադրբեջանի ռազմական գործողությունների դեպքում արդյոք ռուսները կմիջամտե՞ն:

Ա. Հ.

Ադրբեջանական գազ Հունաստանին

Հունաստանը հետաքրքրված է ադրբեջանական գազի մատակարարմամբ, հայտարարել է Ադրբեջանի տնտեսական զարգացման նախարար Հեյդար Բաբաեւը: Նրա տեղեկացմամբ այդ հարցը քննարկման առարկա կդառնա ադրբեջանական պատվիրակության՝ մարտի 14-16-ը Հունաստան կատարելիք այցելությանը: Ներկա դրությամբ եւ մինչեւ 2012 թ. ադրբեջանական գազը Շահ-Դենիզ հանքավայրից կմատակարարվի Վրաստան եւ Թուրքիա: Որոշակի պահանջներ է ներկայացրել նաեւ Իսրայելը:

Նոր առաջադրումներ եւ նոր ցուցակներ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երեկ կենտրոնական ընտրական հանձնաժողովը գրանցեց «Իմփիչ-մենք» դաշինքին եւ մերժեց գրանցել «Երեւանի օժանդակ օրինապահ ջոկատներ» հասարակական կազմակերպության դիտորդներին. վերջինս իր կանոնադրության մեջ ժողովրդավարության եւ մարդու իրավունքների մասին կետեր չէր ներառել, իսկ կազմակերպության անդամներից մեկն էլ մեծամասնական ընտրակարգով թիվ 4 ընտրատարածքում պատգամավորության թեկնածու է առաջադրվել:

Երեկ «Նոր ժամանակներ» կուսակցության ներկայացուցիչները 62 հոգուց կազմված համամասնական ցուցակ են ներկայացրել ԿԸՀ, որի առաջին տասնյակում ընդգրկվածներն են. Արամ Կարապետյան, Ալեքսան Մինասյան, Գուրգեն Եղիազարյան, Հրաչյա Սարգսյան, Վիգեն Հակոբյան, Էմանուել Մարգարյան, Ասոն Թորոսյան, Ռաֆիկ Խոսրիկյան, Սամվել Խաչատրյան, Անահիտ Ցոգոլակյան:

Տիգրան Կարապետյանի «Ժողովրդական կուսակցության» համամասնական ցուցակը եւս ներկայացված է 44 անուններով, որոնց առաջին տասնյակը՝ 3-րդ էջում:

«Բարգավաճ Հայաստանի»՝ նույնպես երեկ ԿԸՀ ներկայացրած ցուցակի առաջին տասնյակի անուններն են. Գագիկ Ծառուկյան, Արամ Իսաբեկյան, Գոհար Եսոյան, Իշխան Զաքարյան, Վարդան Վարդանյան, Հարություն Քուրբյան, Վարդան Գրիգորյան, Վահրամ Առաքելյան, Վարդան Բոսանջյան, Արեւիկ Պետրոսյան:

Ի դեմ՝ ՀՀԿ ցուցակը պատրաստ է, բայց դեռ չի ներկայացվել ԿԸՀ: Երեկ մենք ներկայացրել էինք ցուցակի՝ հասարակությանն առավել հայտնի անունները: Դրանց մեջ չէինք նշել մի շարք անուններ՝ ԱԺ հանձնաժողովի նախագահ Գագիկ Մինասյան, «Հզոր հայրենիքից» Տաճատ Վարդապետյան, Շիրակ Թորոսյան, ԺԱԿ նախագահ Սպարտակ Մելիքյան, ԱԺ պատգամավոր Հարություն Փամբուկյան. նախկին փոխխաղաքապետ Արման Սահակյանը 59-րդ տեղում է, գործարար Գագիկ Աբրահամյանը՝ 27-րդ: Իսկ, այ, ԱԺ պեսաիրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Ռաֆիկ Պետրոսյանը դժգոհ է մնացել ՀՀԿ համամասնական ցուցակից, քանի որ ինքն այնտեղ ընդգրկված չէ:

Երեկ նոր առաջադրումներ են եղել նաեւ մեծամասնական ընտրակարգով:

Պատրաստ է նաեւ ԱԺԿ-ի 77 ազգանուն պարունակող համամասնական ցուցակը, որը գլխավորում է Շավարշ Քոչարյանը:

Տես նաեւ էջ 3

Ադրբեջանական չկայացած ցույց Թեհրանում հայկական դեսպանատան առջեւ

Իրանական ոստիկանությունը ցրել է Թեհրանում հայկական դեսպանատան առջեւ ադրբեջանցիների բողոքի ցույցը, որի ընթացքում տեղի են ունեցել բախումներ ոստիկանության եւ ադրբեջանցիների միջեւ: Ադրբեջանական «Դեյ.ազ» գործակալության փոխանցմամբ, իրավապահ մարմինների աշխատակիցները հեռացրել են ցուցարարներին դեսպանատան մոտից, սակայն բողոքի ակցիան շարունակվել է հարեւան այգում: Արդյունքում ձերբակալվել է ցույցի 6 մասնակից, որոնցից 4-ին ազատ են արձակել՝ 6 հազար դոլար գրավի դիմաց:

Հայաստանը զբոսաշրջության մրցունակությամբ աշխարհում 74-րդն է

Մեր երկիրն առաջինն է տարրական կրթության ընդգրկվածության եւ վերջինը՝ նավահանգիստների ենթակառուցվածքների առումով



Համաշխարհային տնտեսական ֆորումի Հայաստանում գործընկեր կազմակերպություն «Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոնից տեղեկանում ենք, որ ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի զեկույցի, Հայաստանը աշխարհի 124 երկրների մեջ զբոսաշրջության ոլորտի մրցունակությամբ զբաղեցնում է 74-րդ տեղը: ԱՊՀ երկրներում Հայաստանի ցուցանիշը երրորդն է եւ զիջում է միայն Վրաստանին (66-րդ տեղ) ու Ռուսաստանին (68-րդ տեղ): Ադրբեջանը զբաղեցնում է 75-րդ տեղը:

Ըստ զեկույցի, զբոսաշրջության ոլորտում ամենամրցունակը Շվեյցարիան է, ապա Ավստրիան եւ Գերմանիան: Ամենա ոչ մրցունակ երկրներն են Չադը, Բուրունդին եւ Անգոլան:

Մրցունակությունը որոշվում է երեք ցուցանիշներով՝ ոլորտը կանոնակարգող դաշտ, զբոսաշրջության բիզնես միջավայր եւ ենթակառուցվածքներ, մարդկային, մշակութային եւ բնական ռեսուրսներ: Վերոնշյալ ցուցանիշներից Հայաստանն առավել լավ դիրքերում է ոլորտը կանոնակարգող դաշտով (65-րդ տեղ) եւ մարդկային, մշակութային եւ բնական ռեսուրսներով (62-րդ տեղ): Եվ ընդհակառակը, մեր երկրի ցուցանիշը ցածր է բիզնես միջավայրի եւ ենթակառուցվածքների մասով (96-րդ տեղ):

Հայաստանի մրցունակ առավելություններն են սանիտարահիգիենիկ պայմանները, զբոսաշրջիկների անվտանգությունն ու առողջությունը, նրանց նկատմամբ վերաբերմունքը, ոլորտի գնային մրցակցությունը:

Մեր երկրի մրցունակության հիմնական թերությունները նշվել են հետեւյալ գործոնների մասով՝ վիզային ռեժիմն այն երկրների հետ, որոնց քաղաքացիներն ամենից շատ են ճանապարհորդում, շրջակա միջավայրի պաշտպանությունը, ներքին տրանսպորտային եւ օդային ուղեւորափոխադրումների ենթակառուցվածքները, օդային կապն այլ երկրների հետ եւ այլն:

Միեւնույն ժամանակ Հայաստանն աշխարհում առաջին տեղն է գրավել տարրական կրթության ընդգրկվածության մակարդակով եւ վերջինը նավահանգիստների ենթակառուցվածքով:

ԱԲԵԼ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Ազգի» վաղվա ներդիրում

Այս շաբաթվա ներդիրը պարզապես անվանել ենք «Հետաքրքրական»: Կարինե Դանիելյանի «Բնականի սահմանագծից անդին» հրապարակումը ներկայացնում է կլինիկական մահ տարած մարդկանց (նրանցից երկուսը բավականին հայտնի են մեր հասարակությանը) վկայություններն ու խորհրդածությունները գոյության այլ շերտերի մասին: Հանրահայտ Սթոունհենջի եւ Նոյյան տապանի վերաբերյալ նոր հայտնագործությունների ամենաթարմ տեղեկություններ է հաղորդում Հակոբ Ծուլիկյանը: Կներկայացվի նաեւ այս մասին լուսանկարային բացառիկ ռեպորտաժ:

Մյուս նյութերը պատմում են մարդու կենսաբանության նոր առանձնահատկությունների բացահայտման, գլոբալ տաքացման հետեւանքով աշխարհին եւ Հայաստանին սպասվելիքի, նաեւ աշխարհահռչակ երկու հայերի մասին:

Կոռումպացված դասախոսները ԵՊՀ-ում հեռացման վտանգի տակ են

Հիմա ինչպես է Արտեմ Հարությունյանի հարցը

Բուհական կրթությունից դժգոհողներն առավելապես շեշտում են ուսանողների մասնագիտական ցածր գիտելիքները, հայերենի աղքատիկ բառապաշարը, ընդհանուր զարգացածության անբավարար մակարդակը: Երեւանի պետական համալսարանի ռեկտոր **Արամ Սիմոնյանը** պատճառների արմատները տեսնում է դպրոցում, ընտանիքում, միջավայրում: ԵՊՀ ռեկտորատի դահլիճում երեկ հրավիրած ասուլիսում նա խոսեց բուհական բարեփոխումների ու մի շարք այլ հարցերի մասին, որոնցից ամենացավոտը, բացի վերոնշյալից, անտարակույս, նաեւ բուհական կոռուպցիան է: Պարզից պարզ է, որ այս երկու հարցերն անխզելիորեն շաղկապված են: Բուհական կոռուպցիան սկսեց փթթել այն պահից, երբ բուհը մատչելի դարձավ նաեւ դպրոցում «կրճատված» հեղինակություն համարվող, հայոց այբուբենի տառերը հազիվ զանազանող վճարունակ աշակերտի համար: Հենց այդ պահից արդիականացավ ժողովրդական «Փողը մութ տեղը լույս է տալիս» ասացվածքն ու բոլոր բուհերում գիտելիքի լույսը փոխակերպվեց փողի լույսի: Արամ Սիմոնյանին **«Ազգի»** տված հարցերը հենց այդ բովանդակության էին՝ ինչո՞ւ ուսանողների կրթական ցածր մակարդակի գլխավոր պատճառը չի համարվում փողով համալսարան ընդունվելու ու ավարտելու տիրապետող մթնոլորտը, ինչո՞ւ է այդման դյուրացվել համալսարանավարս կոչվելը, ինչո՞ւ չեն բարդացվում պետական քննությունները: Արամ Սիմոնյանը համաձայնեց, որ վճարովի համակարգն իր հետ բերել է խնդիրներ, որոնցից փորձում են ազատվել ամեն կիսամյակ 100-150 ուսանողի համալսարանից դուրս թողնելով: «Մեզ համար նախընտրելի է հրաժարվել նրանց վճարած գումարից, քան զրկվել համալսարանի հեղինակությունից: Ընդհանրապես խելամիտ չէ ուսման վճարի հետ հույսեր կապելը, մենք առաջնորդվում ենք ուսանողի առաջադիմությամբ: Մտածում ենք նաեւ պետական քննությունները բարդացնելու մասին, որովհետեւ վերջին տարիներին դրանք իրոք ձեւական են դարձել: Պետք է ուժեղացնել վերահսկողությունը, որպեսզի ուսանողը պետական քննության գա գիտելիքների հսկա պաշարով՝ պատրաստ աշխատանքային գործունեության»:

ՖՈՏՈԼՈՒՐ

Ռեկտորի ասելով, հեռացման վտանգի տակ են նաեւ ուսանողներից կաշառք վերցնող դասախոսները: Այս պահին քննվում է արտասահմանյան գրականության դասախոս Արտեմ Հարությունյանի հարցը՝ նրա կաշառակեր լինելու մասին պնդել են ռոմանո-գերմանական ֆակուլտետի ուսանողները: Ուսանողների օգնությամբ կաշառակերության դեմ պայքարելու իրենց ծրագիրը բավականին արդյունավետ է, բողոքներ կան նաեւ ուրիշ դասախոսների կաշառակերությունից: «Թեպետ վերջին սոցհարցումներով մայր բուհը վերջին տեղում է մյուսների հետ համեմատ, բայց մենք դրանով չենք գոհանում, այլ ձգտում ենք կաշառակերությունը հասցնել գոնե նվազագույնի, քանի որ առմատախիլ անելը դժվար հարց է»:

Համալսարանի «հանրապետականացման» մասին լուրերը ռեկտորը համարեց անհիմն, որովհետեւ «համալսարանում քաղաքական գործունեությունն անթույլատրելի է թե օրենքի, թե բուհին վերապահված դերակատարման առումներով»: Իրենց մեջ կան եւ հանրապետականներ, եւ դաշնակցականներ, եւ բարգավաճականներ, նաեւ անկուսակցականներ՝ պրոռեկտորներն ու ուսխորհրդի նախագահը: Արամ Սիմոնյանն իր թեկնածությունը չի առաջադրել խորհրդարանական ընտրություններում, որովհետեւ համալսարանից դուրս իր գործունեությունը չի պատկերացնում:

Մայր բուհում տակավին կան կնճռոտ հարցեր, որոնց հարթեցման համար իրականացվել են կադրային փոփոխություններ, բացվել են գիտակրթական նոր կենտրոններ, այժմ մշակվում են մյուս բուհերի, հատկապես պետական ճարտարագիտական համալսարանի հետ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու ծրագրեր: Բարդացել է հատկապես մեր ուսանողներին արտերկրի համալսարաններ ուղարկելու հարցը, կրթաթոշակների փոխարեն այժմ առաջարկվում է ուսանողների փոխանակում: Ռեկտորին այդպիսի առաջարկ է արվել նույնիսկ կրթական ծրագրերով հարուստ Մ. Նահանգներում՝ իրենց ուսանողներին Հայաստան ուղարկելու համար անցած տարեվերջին առաջարկել են դիմել ամերիկահայ կազմակերպություններին:

Իրեն ամենից շատ մտահոգողը հիմա մեզանում թույլ հիմքերի վրա գտնվող օսմանագիտությունն է՝ մասնագետներ գրեթե չկան, պատրաստելն այդման դյուրին չէ, որովհետեւ ասպիրանտից պահանջվում է նաեւ պարսկերենի ու արաբերենի բավարար իմացություն: Կնճռոտ հարց է, սակայն պարտավոր են այս տարի մի ելք գտնել՝ օսմանյան արխիվները ուսումնասիրելու անհրաժեշտության թելադրանքով:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Ավելի շատ գովազդ եւ քարոզչություն, քան հանրային հարաբերությունների զարգացման տեխնոլոգիաների կիրառում

Հանրային հարաբերությունների՝ PR տեխնոլոգիաների (public relation) զարգացումը կարեւորում են առաջադեմ բոլոր երկրները, իսկ մեզ մոտ դա կարեւորվում 4-5 տարին մեկ՝ ընտրություններից ընտրություն: Ընդ որում, մեզ մոտ գերակշռում են գովազդն ու քարոզչությունը, քան հենց PR տեխնոլոգիաների կիրառումը, որը ենթադրում է հանրության, քաղաքացիների հետ շարունակական աշխատանք՝ կառուցված երկխոսության վրա եւ ուղղված առանձին թիրախային խմբերի:

Երեկ «Փաստարկ» ակումբում հայաստանյան PR ինդուստրիայի առանձնահատկություններին անդրադարձավ PR մասնագետների ասոցիացիայի փոխնախագահ Արման Սաղաթելյանը: Նա համոզված է, որ հանրային կապերի զարգացումը հնարավոր է միայն այնպիսի միջավայրում, որտեղ կա կայացած ժողովրդավարություն: Եվ քանի որ մենք դեռ չենք ավարտել ժողովրդավարացման գործընթացը, պարզ է, որ չենք կարող վստահաբար խոսել նաեւ հիբրիդ տեխնոլոգիաների գործունակության մասին:

Թեեւ ասոցիացիայի փոխնախագահը նկատեց, որ տարեցտարի մեր երկրում էլ հանրային կապերի ոլորտի նկատմամբ հետաքրքրությունն ավելանում է, «թեեւ ոչ բավարար ծավալներով, բայց շուկան ձեւավորվում է», սակայն «այն, ինչ կարող ենք տեսնել մեր երկրում, ավելի շատ գնում է նախընտրական քարոզարշավի եւ գովազդի դաշտ, քան PR տեխնոլոգիաների կիրառման ոլորտ»: Ինչ վերաբերում է դրսից PR մասնագետների ներմուծմանը, ապա փոխնախագահ Արման Սաղաթելյանը կարծում է, որ դրա անհրաժեշտությունը չկա, որովհետեւ այդ ներուժը կա մեր երկրում:

Արման Սաղաթելյանը համոզված է, որ այս նախընտրական շրջանում հանրային հարաբերությունները անպայման կլինեն՝ թեպետ ոչ գերակշռող եւ անհրաժեշտ չափի որակյալ, բայց այնուամենայնիվ ճնշող մեծամասնությունը գովազդն ու քարոզչությունն են լինելու: Նա հայաստանյան PR տեխնոլոգիաների դրսեւորումներ համարեց ինտերնետային կայքերում կազմակերպված վիրտուալ բանավեճերը, հեռախոսային կարճ հաղորդագրությունները, որոնք չնչին, բայց PR տեխնոլոգիաներին բնորոշ տարրեր են: PR մասնագետների ասոցիացիայի փոխնախագահը հույս հայտնեց, որ ընտրություններից հետո իրենք կկարողանան հայտնել, թե մոտավորապես որքան գումար է ծախսվել ընտրություններին մասնակից ուժերի քարոզարշավի իրականացման վրա:

Սեւ PR-ի մասին խոսելիս Արման Սաղաթելյանն ընդգծեց, որ նման տերմին մասնագիտական շրջանակներում գոյություն չունի, այլ հարց է, որ հաղորդակցության տեխնոլոգիաներն այլ կարգով են օգտագործվում: Այսինքն, եթե մարդուն վարկաբեկելու համար վաս տեղեկություն են տարածում, դա վաս է, բայց եթե որեւէ անձի մասին փաստերի վրա հիմնված բացասական տեղեկություն են տարածում, ապա դեռ հարց է, թե դրանից ժողովուրդը շահում է, թե տուժում:

ԳՈՏԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏ

Հանրային գերակա շահ մայրաքաղաքի մի շարք տարածքներում

Կառավարության որոշմամբ երեկ Երեւանի մի շարք տարածքներում, «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքի համապատասխան եւ հիմք ընդունելով Երեւանի գլխավոր հատակագիծն ու քաղաքի զարգացման հեռանկարները, իրականացվող քաղաքաշինական ծրագրերի նկատմամբ ճանաչվել է բացառիկ՝ հանրային գերակա շահ: Կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության հաղորդագրության մեջ նշվում է, որ այդ տարածքներում սեփականության օտարման գործընթացը սկսելու վերջնական ժամկետ է սահմանվել 2009 թ.-ի հունվարի 1-ը:

Հօգուտ տեղական արտադրողների

Կառավարությունը հավանություն է տվել որոշ ապակե տարաների ներմուծման համար ներկայիս 0 տոկոսի փոխարեն 10 տոկոս մաքսատուրք սահմանելու մասին «ՀՀ մաքսային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրինագծին: Փոփոխությունն առաջարկվել է հաշվի առնելով տեղական ապակե տարաներ արտադրողների շահերը եւ նպատակ ունի ավելի նպաստավոր պայմաններ ստեղծել նրանց համար: Այս մասին տեղեկանում ենք կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից:

Մանկատներ Մարի Իզմիրլյանի եւ Ֆրիտյոֆ Նանսենի անուններով

Ինչպես տեղեկացանք կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, երեկ կառավարությունը, «գնահատելով մեծ բարերարներ Ֆրիտյոֆ Նանսենի եւ Իզմիրլյանների պատմական դերը հայ ժողովրդի կյանքում» եւ հաշվի առնելով համանուն հիմնադրամների աջակցությունը Հայաստանի մանկատներին, որոշել է «Երեւանի հատուկ տիպի մանկատունը» վերանվանել Մարի Իզմիրլյանի, իսկ «Հույս մանկատունը»՝ Ֆրիտյոֆ Նանսենի անուններով:

Ա. Մ.

Ռաֆֆի Հովհաննիսյանի դասախոսությունը Կլարֆ համալսարանում

Վաստերից (Մասաչուսետս) ստացված մամուլի հաղորդագրությունը տեղեկացնում է, որ մարտի 15-ին Ջեֆերսոնի անվան ակադեմիական կենտրոնում, Կլարֆ համալսարանի «ողջակիզման եւ ցեղասպանության ուսումնասիրությունների Ստրաուլեր ընտանիքի բաժնի կազմակերպությամբ տեղի է ունենալու Ռաֆֆի Հովհաննիսյանի դասախոսությունը «Հին քաղաքակրթություն եւ պետություն ղեկավարելու արդի հմտություններ: Հայաստանը երկընտրանքի առաջ» թեմայով:

Հայաստանի Հանրապետության առաջին արտգործնախարար եւ ներկայիս Ազգմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի հիմնադիր տնօրենը խոսելու է Հայաստանի զարգացման հաջորդ փուլի մասին, որը ներառելու է որպես միջազգային պետությունների ընտանիքի անդամի իր դերի վերագնահատման եւ աշխարհով մեկ սփռված հայերի քաղաքական, տնտեսական, մշակութային եւ ինտելեկտուալ հնարավորությունների բացահայտման եւ միավորման խնդիրները:

Տ. Ս.

4500 հոգանոց հնչակների «առողջ ամբիցիան» էլ է 5 %

Քաղաքական հայտարարությունները կուսակցությունների գործունեության հիմնական մասն են կազմում եւ խիստ հարգի են ընթացիկ ժամանակահատվածում՝ անկախ այն բանից, դրանք կրկնվում են, թե՞ գերազանցում են իրար մտքերի եւ երեւակայության անիմանալի վայրիվերումներով:

Երեկ եղածներից հետ չմնաց նաեւ Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը: Կենտրոնական վարչության ատենադեպ **Լուսինե Սարգսյանը** հայտարարեց, որ իրենց 120-ամյա պատմությամբ եւ մոտ 4532 անդամներով ընդդիմադիր կուսակցությունը եւս որոշել է մասնակցել ընտրություններին, հաղթահարել 5 տոկոսի սահմանագիծը եւ անցնել ԱԺ՝ ծառայելու ժողովրդին: ՍԴՀԿ-ի նպատակն է իր գոյությամբ մի փոքր պահել առաջիկա Ազգային Ժողովը պիտակավորումներից:

Ինչպես հայտնեց ՍԴՀԿ-ի ղեկավար Լ. Սարգսյանը, «Ժառանգությունը» միավորված կերպով ընտրություններին մասնակցելու առաջարկ արել է: «Չեմ կարծում, թե Ռաֆֆի Հովհաննիսյանի առաջարկությունը մեզ նվաստացնելու նպատակով էր, համենայնդեպս, ես կարծում էի, որ ինքը պատրաստ է որոշ զիջումների արբեր հարցերում, միայն թե կայանար դաշինքը», ասաց նա, եզրակացնելով, թե երեւի ճիշտ չէր լինի, որ 120-ամյա կուսակցությունը 2-3 տարվա կուսակցության կազմում ներկայանար: Բանախոսը չկարողացավ կոնկրետ պատասխանել **«Ազգի»** հարցին, թե կոնկրետ ինչ զիջումներ էր ակնկալում իր կուսակցությունը:

Ի դեպ, բանախոսը, որի ասուլիսը լուսաբանելու էին եկել ընդամենը չորս լրատվամիջոցներից, իր անհամաձայնությունը հնչեցրեց նախորդ օրը ՀԺԿ-ի առաջնորդ Ստեփան Դեմիրճյանի հայտարարության առնչությամբ: «Թող ներող լինեն հժկ-ականները, բայց այդ նախաձեռնությունն իրենցը չի եղել: «Ժառանգություն»-ը, «Հանրապետություն» կուսակցությունը, «ԱԺՄ»-ն շատ ավելի վաղ սկսեցին այդ նախաձեռնությունները եւ միասին փորձում էին ի մի բերել դաշտը, ես նույնպես սկսել եմ օգոստոսին խոսել այդ մասին, բայց այն պայմանները, որ թելադրել էր ՀԺԿ-ն, ընդունելի չէին կարող լինել ընդհանուր դաշտի համար: Եսքեղ բոլորն էլ իրենց խնդիրներն ունեն եւ չեն կարող ամբողջ ցուցակը տրամադրել ՀԺԿ-ին: Երբեմն պետք է կարողանալ հետ կանգնել ներկուսակցական նպատակներից եւ մտածել ընդհանուր նպատակի շուրջ»:

Չնայած ընդդիմության ամբիցիաների եւ դրա հետեւանքով՝ չմիավորվելու հիասթափությանը, ՍԴՀԿ-ի կենտրոնական վարչության ատենադեպը չի համարում, որ պետք է խաչ քաշել ընդդիմության վրա: «Միգուցե մեկ ցուցակով չգնանք, բայց կհամախմբվեն մի նպատակի շուրջ՝ հակադրվել իշխանական թեւին»:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 86 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Թող. 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լրագրողների սենյակ / հեռ. 581841
Գովազդային ծառայություն / հեռ. 582483
Շուրջօրյա լրահաւաք ծառայություն / հեռ. 529353
Գովազդային բաժանմունք
«Ազգ» թերթի
Թերթի նյութերի ամբողջական թե մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսությամբ առանց խմբագրության գրավոր համաձայնության խստիվ արգելվում են
Համաձայն ՀՀ հեղինակային իրավունքի մասին օրենքի
Նյութերը չեն գրախօսվում ու չեն վերադարձվում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակության համար խմբագրությունը պատասխանատուություն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Բնապահպանական նոր կոալիցիա

Թեղուտի ու Շնողի բնակիչները չմիացան

Բանի դեռ կառավարությունը որոշում չի կայացրել «Էյ Սի Փի» ընկերությանը Թեղուտի հանքավայրը շահագործելու թույլտվություն տալու վերաբերյալ, բնապահպանները մտադրվել են կանխել Լոռվա անտառների գլխին կախված հերթական արհավիրքը:

Երեկ 25 բնապահպանական հասարակական կազմակերպություններ հայտարարեցին «SOS Թեղուտ» կոալիցիայի ստեղծման մասին: Առանց Թեղուտի հանքավայրի շահագործման էլ Լոռվա հյուսիսային հատվածում բնության ու տեղի բնակչության առողջության համար խիստ անբարենպաստ շրջափակում են առաջացրել Ալավերդու պղնձամոլիբդենային կոմբինատը, Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատն ու պոչամբարը, Շամլուղի բազմամետաղային հանքավայրը: Կոալիցիան նամակ է հասցեագրել ՀՀ նախագահին, որում ներկայացնում է հանքավայրի շահագործման հետեւանքով սպասվելիք եւ հավանական աղետների մասին, առաջարկելով փնտրել խնդրի լուծման այլընտրանքային տարբերակ: Նախագահի պատասխանից կախված կլինի հետագա գործողությունների ընթացքը: Հիշեցնենք, որ բնապահպանական նման կոալիցիա ստեղծվել էր նաեւ Շիկահողի անտառների փրկության համար, եւ նախադեպը բավական հաջող ավարտ ունեցավ:

Նորից ասվեց, որ բնապահպանության նախարարությունը նախագծին դրական եզրակացություն տվել է առանց իրական էկոլոգիական փորձաքննություն իրականացնելու, առանց գյուղնախարարության ու առողջապահության նախարարությունների եզրակացությունների: Եվ եթե հանքը շահագործվի, կնշանակի, որ խախտվում են 3 միջազգային կոնվենցիաներ (որոնց միացել է Հայաստանը) ու ՀՀ 11 օրենքներ, սահմանադրության 3 հոդվածներ շրջակա միջավայրի պահպանության ու էկոլոգիական փորձաքննության վերաբերյալ:

Թեղուտի հանքավայրը Ալավերդուց 30 կմ հեռավորության վրա է, պղնձի եւ մոլիբդենի պաշարներով Հայաստանի երկրորդ հանքավայրն է համարվում: Ստորգետնյա, փակ հանույթի տարբերակը, ինչի շնորհիվ բնությունը միայն նվազագույն վնասներ կկրեր, արդյունահանողները բացառում են, քանի որ ստորգետնյա հանույթը տասնապատիկ թանկ է բաց հանույթի տարբերակից, իսկ հանքաքարի բաղադրությունն ու որակը թույլ չեն տալիս այդպես վարվել: Նման շրջադարձ հնարավոր կլիներ միայն հարուստ հանքաքարի առկայությամբ, մինչդեռ հանքավայրում պղնձի եւ մոլիբդենի պարունակությունները բավական ցածր են, համապատասխանաբար 0,36 եւ 0,22 տոկոս: Այսինքն, բնական համակարգերի ոչնչացումը նույնիսկ չի փոխհատուցվելու այն չափով, ինչ գոնե պիտի ենթադրելի լիներ նման կարգի ավերածություն իրականացնելուց առաջ: Ասենք, որ «Հայաստանի անտառներ» հասարակական կազմակերպության տնօրեն **Նազելի Վարդանյանի** վկայությամբ, հետախուզական աշխատանքներ իրականացնելու համար ճանապարհներ բացելու նպատակով արդեն իսկ այստեղ ակտիվ անտառահատումներ են կատարվել:

Երեւանի մանկավարժական ինստիտուտի դասախոս, Շնող գյուղի բնակիչ Վարազ Ավետյանին մտահոգում էր նաեւ այս տարածքում հնագույն երկրաբանական ու հնագիտական հուշարձանների ոչնչացման հեռանկարը: Հանքավայրի շահագործման տարածքում պատմական ու մշակութային արժեքի 7 հուշարձաններ կան, որոնց մասին որեւէ հիշատակում չի արվել հանքարդյունահանման ծրագրում:

Մի այլ դիտարկում ներկայացրեց Սոցիալ-էկոլոգիական ասոցիացիայի նախագահ Սրբուհի Հարությունյանը: Թեղուտի հանքավայրի շահագործման փաստն օգտագործելով, անտառանյութի բիզնեսով զբաղվող մարդիկ պղտոր ջրում ձուկ են որսում: Իր այցելություններից մեկի ժամանակ Սրբուհին դեմ առ դեմ հանդիպել է անտառից դուրս եկող բարձրորակ փայտանյութով լի մի բեռնատարի:

Եթե այս ծրագիրն իսկապես իրականություն դառնա, ապա ըստ նախագծի հեղինակների հաշվարկների, 25 տարվա մեջ 127 հազար ծառ կոչնչանա: Նոր անտառատնկումների, անտառվերականգնման վերաբերյալ խոսումները ոչինչ չեն նշանակում: Եթե հազարավոր ծառեր էլ տնկվեն, դրանք նույնիսկ 100 տարի հետո անտառ չեն դառնա ու չեն փոխարինի բնության ստեղծածին:

Կոալիցիայի հավաքին մասնակցում էր շրջակա Շնող եւ Թեղուտ գյուղերի բնակիչների մի մեծ խումբ: Եվ մինչ փորձագետներն ու բնապահպանները անխնա դասապարտում էին Լոռվա այդ գողտրիկ անկյունն էլ ավերելու կոչված ծրագիրը, գյուղացիները համեստ լռություն էին պահպանում: Մայրաքաղաք էր եկել նաեւ հանքավայրի հետազոտական աշխատանքների տարածաշրջանային վարչության պետ **Ռուբեն Պապոյանը**, որն անընդհատ վկայակոչելով գյուղացիներին, պնդում էր, որ անտառահատումների եւ աղբյուրների ու արտերի չորանալու մասին լուրերը դատարկ խոսակցություններ են, եւ գյուղացիների մեծամասնությունը կողմ է հանքավայրի շահագործման ծրագրի իրականացմանը: Նրա խոսքը հետո հաստատեցին Թեղուտի համայնքապետ **Հարություն Մելիքսետյանն** ու Շնողի փոխգյուղապետ **Կորյուն Շադինյանը**: «Եթե օրենք է խախտվում, հարցը լուծեք դատական կարգով», իր կողմից նույնիսկ խորհուրդ տվեց Թեղուտի համայնքապետը: Իսկ Շնողի փոխգյուղապետի բացատրությունները տխուր իրականության վավերացումն էին: Շնողն ու Թեղուտը 4-5 հազար բնակիչ ունեն, որոնցից միայն 1500-ն աշխատատեղ ունի: Բնակիչների մեծ մասը նույնիսկ անհամբերությամբ է սպասում շահագործման աշխատանքների մեկնարկին, մտածելով, որ գյուղերը պիտի ծաղկեն, իրենք էլ հետը: Հակառակ դեպքում գյուղերն ամայանալու են, ասում են գյուղապետները: «Եվս 1450 մարդ լիարժեք աշխատատեղ կունենա», ասում է Ռուբեն Պապոյանը: Նրանց հիշեցնում եմ, որ տարիներ անց, միեւնույն է, այստեղ բնությունն է ավերակ դառնալու, ամայանալու, ու արդեն դրա պատճառով են մարդիկ լքելու բնակավայրը:

Թեղուտցիների ու շնողցիների արձագանքը կոալիցիային միանալու առաջարկին, լռությունը եղավ:

ԿԱՐԻՆԵ ՂԱՆԻԵԼՅԱՆ

Մեծամասնականով նոր թեկնածուներ

Երեկ նոր առաջադրումներ են եղել նաեւ մեծամասնական ընտրակարգով: Արաբկիրի թիվ 4 ընտրատարածք՝ Հայրապետ Հայրապետյան, Համազասպ Ուզունյան, Տիգրան Նալբանդյան, Աշտարակի թիվ 14՝ Արագած Ախոյան, Թալինի թիվ 15՝ Մնացական Մնացականյան, Մասիսի թիվ 16՝ Տիգրան Ստեփանյան, Սեւանի թիվ 23՝ Հրանտ Մադաթյան, Հրազդանի թիվ 25՝ Մխիթար Հարությունյան, Ջրաբերդի թիվ 26՝ Ռոբերտ Թովմասյան, Նոր Հաճնի թիվ 27՝ Մելիք Մանուկյան, Գյումրի-Ախուրյանի թիվ 35՝ Համբարձում Մաթեւոսյան, Արթիկի թիվ 36՝ Մուշեղ Պետոյան, Վայոց ձորի թիվ 39՝ Սերգեյ Բագրատյան, Արմավիրի թիվ 21՝ Ռուստամ Գաբրիելյան, Սեւանի թիվ 24՝ Խորեն Սարգսյան, Գյումրիի թիվ 34՝ Մարտուն Գրիգորյան, Տավուշի մարզի թիվ 40՝ Կարեն Ալթունյան, Արման Ամիրաղյան, Տավուշի թիվ 41՝ Հարություն Ղազինյան:

Հ. Գ.-Մեր այսօրվա նյութերից մեկում գրել ենք, որ երեկ ԿԸՀ է ներկայացվել Տիգրան Կարապետյանի «Ժողովրդական կուսակցության» համամասնական ցուցակը: Ավելացնենք, որ ցուցակի առաջին տասնյակի անուններն են. Սամվել Շահգելդյան, Գագիկ Ստեփանյան, Արտակ Սարգսյան, Արայիկ Արամյան, Գագիկ Մխեյան, Պետրոս Քաջախյան, Ռուզան Ստեփանյան, Կարապետ Հակոբյան, Արտեմ Մնացականյան, Ջեմմա Էլիզբարյան, Հասան Հասանյան եւ Աշոտ Խաչատրյան:

Մ. Խ.

«Արմենիկումն» ընդգրկված է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդման ազգային ծրագրում

Տեղեկացրեց առողջապահության փոխնախարարը

2007-2011 թթ.-երին «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագիրն» է երեկ հաստատել Հայաստանի կառավարությունը: Այն լրագրողներին ներկայացրել են առողջապահության փոխնախարար **Հայկ Դարբինյանը** եւ «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման կենտրոնի» տնօրեն **Սամվել Գրիգորյանը**: Ծրագրի հիմնական նպատակը վարակին համաճարակային արդյունավետ հակազդման ձեւավորումն է, իսկ հիմնական խնդիրներն են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին միջգերատեսչական հակազդման զարգացումը, վարակի կանխարգելումը բնակչության խոցելի խմբերի շրջանում, վարակով հիվանդների բուժման հասանելիությունը, մորից երեխային փոխանցման կանխարգելումը, բնակչության խոցելի խմբերի, հիվանդությամբ տառապողների նկատմամբ խտրականության դեմ պայքարը:

Ծրագրի արժեքի վերաբերյալ մեր հարցին ի պատասխան, Հայկ Դարբինյանը հայտնեց, որ այն կազմում է 33 մլն դոլար, որը հատկացվելու է ինչպես պետական բյուջեից, այնպես էլ միջազգային կազմակերպություններից: **«Ազգի»** մյուս հարցին, թե հնարավո՞ր է կանխարգելել ՄԻԱՎ վարակի փոխանցումը հիվանդ մորից երեխային, ինչպես նշված է ծրագրում, Սամվել Գրիգորյանը պատասխանեց, որ նման հնարավորություն գոյություն ունի: Ըստ կենտրոնի տնօրենի, ՄԻԱՎ-ով վարակված մորից ծնվող երեխաների 35-40 տոկոսը ծնվում է վարակված, սակայն եթե նախածննդյան վերջին շրջանում մայրը որոշակի դեղեր ստանա, ապա առողջ երեխա ծնվելու հավանականությունը մոտ է 90-95 տոկոսի: Նշվեց, որ 8 նման դեղ է արձանագրվել, երբ հիվանդ մայրերի երեխաները առողջ են ծնվել:

Սամվել Գրիգորյանը նաեւ հայտնեց, որ անցյալ տարի ՁԻԱՀ-ով հիվանդների մահվան դեպքերը մեկով նվազ են եղել 2005 թ.-ի համեմատ: Արձանագրվել է 22 մահվան դեպք՝ նախորդ տարվա 23-ի համեմատ: Տեղեկացվեց նաեւ, որ ՄԻԱՎ-ով վարակակիրների թիվը Հայաստանում 436 է: Սակայն դա միայն հետազոտությունների արդյունքում հայտնաբերվածների թիվն է, քանի որ վարակը երկարատեւ՝ 7-15 տարվա գաղտնի շրջան ունի, որի ժամանակ հիվանդությունը չի դրսեւորվում:

Մեր հաջորդ հարցին, թե «Արմենիկումը» որպես բուժման միջոց ընդգրկվա՞ծ է հիվանդության հակազդման ծրագրում, Հայկ Դարբինյանը դրական պատասխանեց, ավելացնելով, սակայն, որ դեղամիջոցի օգտագործման ծավալները հայտնի չեն:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

www.azg.am www.azgdaily.com www.azgdaily.eu

ԱՅՍՊԵՍ ԱՍԱՑ ՄԱՆՈՒԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ

Տեսնում եմ՝ ինչ ամպեր են կուտակվում եւ ինչ փողեր են պտտվում

«Իմ հիվանդության ընթացքում ինձ բոլոր լրատվամիջոցներն աջակցել են, եւ ամենից շատ՝ Հ1-ը, ես շոյված եմ, այսինքն՝ ես ճիշտ եմ արել, ճիշտ եմ աշխատել», եզրակացրեց երեկ ԱԺ պատգամավոր, «Ժողովրդավարական ուժի» կուսակցության նախագահ **Մանուկ Գասպարյանը**՝ առողջական խնդիրները հաղթահարելուց հետո հանդիպելով լրագրողներին: Նա նորություն հայտնեց՝ ԺՈՒԿ-ն ու Արտակ Սադոյանի ԱԺԴ-ն միասին են գնալու ընտրությունների՝ ԺՈՒԿ-ի կողմից ներկայացված համամասնական ցուցակով, որտեղ առաջինը Մանուկ Գասպարյանն է, երկրորդը՝ Արտակ Սադոյանը, երրորդն «Ազգային միաբանությունից» նեղացած Աղասի Արտակյանն է, չորրորդը՝ Էդուարդ Աղաջանովը: Ցուցակում 39 մարդ է ընդգրկված, նրանցից 6-ը կին է: Սա դաշինք չէ, այլ միասնական ցուցակ, քանի որ դաշինք կազմել նշանակում է 5-ի փոխարեն՝ 7 տոկոս պետք է հավաքել, այսինքն լրացուցիչ 25 հազար ձայն էր անհրաժեշտ լինելու:

Մանուկ Գասպարյանը 98 տոկոսով իրեն խորհրդարան անցած է համարում մեծամասնականով, Ա. Սադոյանը եւս առաջադրվելու է մեծամասնական ընտրակարգով, այդպիսով երկու տեղ ազատելով իրենց ցուցակի այլ անդամների համար: Իսկ համամասնական կարգով ԺՈՒԿ-ը նվազագույնը մինչեւ 8 տոկոս, առավելագույնը՝ 15 տոկոս ձայն է ակնկալում. «Տիգրան Կարապետիչի կեսն ենք ուզում, մեր ուժերն էդքանի կբավարարի. եթե մենք անթերի աշխատենք՝ 11-12 պատգամավոր 7 տոկոսի դեպքում կունենանք խորհրդարանում, «դառմաեդ» չենք ունենալու խորհրդարանում», ասաց նա: Համամասնական ցուցակը գլխավորում է Մանուկ Գասպարյանը, կազմակերպչական բոլոր հարցերն Արտակ Սադոյանը հանձնել է Գասպարյանին, բայց հանդիպումների ժամանակ է «բուխիր» գնալու. Գասպարյանը վստահ է, որ իր ու Ա. Սադոյանի համագործակցությունը սպասվելու է:

Արտակ Սադոյանը, երրորդն «Ազգային միաբանությունից» նեղացած Աղասի Արտակյանն է, չորրորդը՝ Էդուարդ Աղաջանովը: Ցուցակում 39 մարդ է ընդգրկված, նրանցից 6-ը կին է: Սա դաշինք չէ, այլ միասնական ցուցակ, քանի որ դաշինք կազմել նշանակում է 5-ի փոխարեն՝ 7 տոկոս պետք է հավաքել, այսինքն լրացուցիչ 25 հազար ձայն էր անհրաժեշտ լինելու:

Ըստ Գասպարյանի՝ ՀՀԿ-ն ու «Բարգավաճ Հայաստանն» անխոս ապագա խորհրդարանում տեղ կունենան՝ հանրապետականը վարչական ռեսուրս ունի, «Բարգավաճը»՝ Գագիկ Ծառուկյանի ֆենոմենը: Իսկ մնացած բոլոր կուսակցությունները պրոբլեմներ են ունենալու՝ ՀՅԴ-ից սկսած: Եվ մի կանխատեսում էլ արեց. «Բարգավաճը» համամասնականի տեղերը ավելի շատ է տանելու, քան ՀՀԿ-ն, քանի որ վերջինիս ռեսուրսի կեսը սխիզբ է»:

Իսկ «Օրինաց երկիրն» ու «Ազգային միաբանությունը» եթե այս մի ամսում հակազդվազդ անեն իրենք իրենց հանդեպ, ինչպես որ անում են այժմ, իրենց ունեցած ռեսուրսը կարող է իջնել եւ հասնել 5 տոկոսի սահմանին. «Մի 40 օր առաջ, երբ ես ուսումնասիրում էի, իրենք ռեսուրս ունեին, մնացած կուսակցությունները բոլորն արեւի տակ պետք է տեղ ման գան. եւ ՄԱԿ-ը, եւ ՀՅԴ-ն, եւ ՀԺԿ-ն, մենք էլ հեսները միասին», իրենց մասի վրա ձայնը հնչեղ դարձրեց Մանուկ Գասպարյանը: Բացի էս երկու կուսակցությունից (ՀՀԿ, ԲՀԿ)՝ մնացածներին անակնկալներ են մատուցվելու: Մեր կողմից ավելացնենք, որ Մանուկ Գասպարյանի ոչ բոլոր կանխատեսումներն են իրականանում, բայց եւ այնպես, նրա ասելով, առանձին ընտրատարածքներում թեժ պայքար է սպասվում, անգամ արյունահեղություն կարող է լինել. «Որովհետեւ տեսնում եմ՝ ինչ ամպեր են կուտակվում եւ ինչ փողեր են պտտվում»:

Ինքն անձամբ ոչ մի կուսակցության հանդեպ «սեւ փիարով» չի զբաղվելու, իշխանությունների 15 տարվա չարաշարքների մասին է ասելու, ԺՈՒԿ-ի ծրագրերն է ներկայացնելու՝ 70-80 հազարով մեծ տաքերով եւ ընթեռնելի բրոշյուր է տալու, որ ակնոց չունեցողները կարդան առաջին էջում՝ կարգախոսներով:

Գասպարյանը բացեց այն գաղտնիքը, որ բանակցությունների մեջ է եղել Վիկտոր Դալլաքյանի հետ, սակայն վերջինս գերադասել է մեծամասնականով առաջադրվել, ու նրա համար այնտեղ պրոբլեմներ են լինելու, քանի որ նույն ընտրատարածքում առաջադրված Վահրամ Բաղդասարյանն այնքան էլ միամիտ մարդ չէ. «Մի հաշվարկ կա երեւի, իսկ Վահրամ Բաղդասարյանի պատգամավոր չլինելը ես չեմ պատկերացնում»:

Իրենց միությունը որակեց ժողովրդի կողմից ճանաչված մարդկանց դաշինք՝ որը դաշինք չեն անվանում, որ 25 հազար ձայն հավաքելու անհրաժեշտությունն իրենց մեջքին „չփաթաթեն, էն էլ առանց փողի. «Փող մենք չենք պտտացնում... այս պահի դրությամբ՝ ես ունեմ 12 մլն դրամ, որը հիմնադրամի հաշվին կմուտքագրվի», անկեղծացավ Գասպարյանը:

Իսկ ինչպե՞ս է Ա. Սադոյանը համաձայնել ցուցակում երկրորդ հորիզոնականը զբաղեցնել. «Արտակի հետ կապված՝ ոնց որ թե խունջիկ էր լինում ինքը՝ չէր արտահայտվում, բայց հետո հասկացավ, որ ճիշտը սա է»:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Ազգի» կայքէջում մարտի 8-ի շնորհավորանքի սրահը բաց է բոլորի համար

Ջմեռվա գրտերն ու անհարմարությունները վերջապես ընդմիջեց գարունը՝ փողոցներում հայտնված ձնծաղիկների ու մանուշակների փնջերով, նոր հույսերի ու ակնկալիքների ծնունդով, եւ վերջապես տարվա ամենագեղեցիկ տոներից մեկով՝ **մարտի 8-ով**: Նախընտրական իրարանցումն ու խառնաշփոթը փորձել այս շաբաթ մոռանալ մեր կայքէջում: **«Ազգն»** այս շաբաթ արտերկրի եւ Հայաստանի մեր բոլոր ազգակիցներին հնարավորություն է ընձեռում շնորհավորելու իրենց քույրերի, մայրերի, տատիկների, կանանց, ընկերուհիների ու մտերմուհիների, աշխատակցուհիների **մարտի 8-ը**, որոնք հատկապես այդ օրը ջերմության ու ուշադրության են սպասում:

Մեր տոնական շնորհավորանքի սրահը հետո կամփոփի Գոհար Գեւորգյանը, իսկ սրամիտ, զվարթ, գարնանային շնորհավորանքները կարժանանան **«Ազգի»** գրադարանի հեռաբրիչական հրատարակություններին:

ԱԶԳ
ԵՍԻԹԸՆՏՐԱԿԱՆ

Լյումպենացված աղքատը երկու բան ունի վաճառելու՝ մարմինը եւ ձայնը

Ո՞ւմ հետ պետք է հույս կապի ընտրողը եւ ինչպե՞ս չսխալվի, արդյոք կարո՞ղ ենք ընտրողից պահանջել, որ դիմանա նյութական գայթակղությանը: Այս հարցի դական կամ բացասական պատասխանը երկուսուկես ամիս հետո տեղի ունենալիք ընտրությունների նկարագիրն է նաեւ պարունակելու: Իսկ պատասխան ունենալու համար մենք պետք է պատկերացնենք, թե ո՞վ է ընտրողը, ի՞նչ է ուզում, ի՞նչ է սպասում ընտրություններից: Այս կարգի մի վերլուծություն մենք ավելի վաղ արել էինք, բայց դա ընդամենը լոգարողական մոտեցում էր, իսկ այժմ կառաջնորդվենք մասնագետի՝ սոցիոլոգ Լյուդմիլա Հարությունյանի վերլուծություններով, քանի որ ընտրություններից երկուսուկես ամիս առաջ մեր հասարակության տարբեր շերտերում տիրող տրամադրությունները, հասարակության հոգեբանական պատկերը վեր հանելը նախ մասնագետների գործն է. դրանով պետք է զբաղվեն սոցիոլոգները, փիար եւ ընդհանուր տեխնոլոգիաների մասնագետները: Լ. Հարությունյանը, վերլուծելով ընտրողների շերտերը, ընտրողների մեջ տեսնում է մի քանի խումբ. ա/ համոզված ընտրողներ, ովքեր հասկանում են, թե ինչո՞ւ են ընտրում, ո՞ւմ պետք է ընտրեն, կապում են իրենց ընտրությունը երկրի ապագայի եւ որոշակի սկզբունքի հետ, սրանց տեսակարար կշիռը հասարակության մեջ մեծ չէ՝ մի 15 տոկոս. բ) կլանների համակիրներ, ովքեր ընտրում են կլանի պատկանելությունից ելնելով՝ ընտանեկան-հարեւանական, տնտեսական-ֆինանսական կլաններ, նվիրվածություն որեւէ անձի. գ) ընդհանուր փոքր ու մեծ բիզնես անողներն են, սրանց մեջ եւ՝ ընտրողներ կան, եւ՝ ընտրվողներ, վերջիններս ներդրում են անում (300-500-600 հազար դոլար), որ վաղն այդ կապիտալի դիվիդենտները սպասան նյութի, փողի, իրավունքի, սեփականության, «պռախոդի» եւ այլ ձեւերով, իսկ ընտրող բիզնեսմենները գնում, 5 հազար դրամով ընտրում են, եւ այդ մի օրվա բիզնեսն են անում. դ) ընդհանուր բիզնեսի վրա մասնագիտացած խմբեր (մարզային հանձնաժողովի անդամներ, վստահված անձինք, որոնք կարող են լինել բոլոր խմբերում, բայց հիմնականում բիզնես-խմբի մեջ են), ովքեր կազմակերպում են ընտրությունները՝ վազում են, կեղծում են եւ այլն. ե) ընտրողներ, ովքեր համոզված են, որ իրենք պետք է գնան-ընտրեն, ուզում են ընտրել, մասնակցում են գործընթացին, բայց սկզբունքով չեն մասնակցում, ենթարկված ընտրողներ են՝ սրանց մեջ կան բազում խաբված, պարտադրանքի տակ ընկած, վախի ազդեցությամբ ընտրողներ (օրինակ՝ կրթությունը կարող է վախից մասնակցել, նաեւ՝ բիզնես մասնակցություն ունենալ). զ) այս խմբում անտարբերներն են, բայց կան անտարբերներ-բոյկոտողներ, որոնք չեն ուզում պատասխանատվություն կրել կամ բողոքելու այդ ձեւն ընտրել, եւ կան նաեւ իրական անտարբերներ: Իսկ Հայաստանի կուսակցությունների մի մասն առաջին խմբի մեջ է (սկզբունքի համար պայքարողներ), երկրորդ մասը կլանի մեջ է, որովհետեւ նրանք վերջապես քաղաքական կլանի են պատկանում:

Լ. Հարությունյանը գտնում է, որ այս պահին հասարակության մեջ ընդհանուր տրամադրությունն այն է, որ Հայաստանում հերթական անգամ չեն լինի ընտրություններ եւ կվերարտադրվեն իշխանավորները: Այսպիսի տրամադրությունը շատ լուրջ հիմք ունի՝ երկրում տիրող իրավիճակն է թելադրել այս տրամադրությունները: Սրանք փետրվար ամսին բնորոշ տրամադրություններ են, երբ դեռ պատրաստվածության թիվ 1 վիճակը չկա: Շատ հնարավոր է, որ ապրիլին տրամադրությունները փոխվեն եւ այն իրավիճակը լինի, որ ընտրողն ասի՝ ես գնալու եմ եւ ընտրելու եմ, ու տեսեք՝ ո՞վ կհաղթի իմ երկրում:

Լ. Հարությունյանը, սակայն, հիշեցնում է, որ ընտրողների 40 տոկոսը լյումպենացված է. աղքատ երկրում նյութական գայթակղությունները հզոր են: Շատ հետաքրքրական սոցիոլոգիական ճշմարտություն կա. աղքատ մարդը երկու բան ունի վաճառելու՝ մարմինն ու իր ձայնը, երկուսն էլ վաճառում է. «Ես չեմ խոսում այն աղքատների մասին, որոնք, այնուամենայնիվ, սկզբունքներով են ապրում, այլ լյումպենացված աղքատների, որոնցից ոչինչ պահանջել հնարավոր չէ: Բայց մնացած 60 տոկոսից պահանջելու շատ բան կա: Օրինակ՝ չմասնակցողից կարող եք պահանջել, որ մասնակցի»:

Ընտրո՞ղն է միայն մեղավոր: Ոչ. եւ՝ լիդերները, եւ՝ քաղաքական ուժերը, եւ՝ մտավորականությունը, եւ՝ ընդհանրապես մեղավոր են: Վերջինիս մեղքն ամենամեծն է: Ընդհանրապես տեր չի կանգնում էս երկրին: Տնտեսական ընդհանրապես խեղդել է քաղաքական ընդհանրապես եւ չի թողել վերջինիս գոյության որեւէ լուրջ պայման: Տնտեսական ընդհանրապես կերպարանափոխման հզոր ունակություն ունի, որովհետեւ կապիտալը հզոր բան է: Դրա համար երբ պետք է՝ նա հանդես է գալիս որպես քաղաքական ընդհանրապես, բայց իրականում նա տնտեսական ընդհանրապես է: Ես հենց նրանում եմ մեղադրում քաղաքական ընդհանրապես, որ այդ ընդհանրապես իր սեփական ունեցվածքը պահելու համար երկիրը զրկել է քաղաքական ընդհանրապես, վերցրել է քաղաքական ընդհանրապես խորը եւ: Այն հանգամանքը, որ մեր ԱԺ-ում նստած են այդ քանակությամբ գործարարներ՝ խոսում է այն մասին, որ նրանք ոտղակի քաղաքական ընդհանրապես տեղ չեն թողել: Նրանք ոտղակի ոչնչացրել են քաղաքական ընդհանրապես: Եթե Հայաստանում ընդհանրապես չգիտակցի իր պարտականությունը, հայ հասարակությունը ոչ մի շանս չունի:

Արդյոք Հայաստանի ընդդիմության մեջ կան արժանի ուժեր եւ մարդիկ, ում կարող է ընտրողը վստահել. «Այո, կան: Ես գտնում եմ, որ Հայաստանում մի վաս բան է տեղի ունեցել վերջին երկու տարում. գիտակցաբար արժեզրկվել է ընդդիմությունը: Վերջինս ինքն էլ է օգնել այդ արժեզրկմանը այն ժամանակ, երբ բոյկոտեց ԱԺ-ն, երբ համաձայնեց այն մեղադրանքին, որ ինքը չի աշխատում ԱԺ-ում, երբ համաձայնեց պառակտմանը, չկարողացավ միաբանվել, մի խոսքով՝ չխնայեց իր արժեզրկմանը: Ընդդիմության վարկաբեկումը մտել է իշխանության պահպանման խնդրի մեջ: Ժողովուրդն էլ է այսօր օգնում այդ արժեզրկմանը: Հասարակ մարդը հեռու է ժողովրդավարության կարգախոսներից եւ պատրաստ է ուզում, սպասում է իր պատրաստներին: Եթե ընդդիմությունն այդ գործառույթը չի կատարում, այլ ինչ-որ ճառեր է արտասանում, այն էլ այսպիսի տարանջատված վիճակում, հասարակ մարդը սկսում է չհավատալ, որ այս ուժն իրեն կպատրաստի: Օրինակ, ըստ որոշ հարցումների՝ 3-5 տոկոս մարդիկ Գագիկ Ծառուկյանին համարում են ընդդիմություն, որովհետեւ նա խոսում է մարդկանց բարգավաճելու մասին. ինչո՞ւ հասարակ մարդը դա չի կարող իրեն պատրաստելու փորձ համարել: Սա շատ կարեւոր հոգեբանական պահ է: Մեր ընդդիմությունը շատ բան պետք է հասկանա»:

Լ. Հարությունյանն ասում է, որ Հայաստանում կարեւոր չէ, թե ով կընտրվի նախագահ, կարեւոր է, որ այդ նախագահը լեգիտիմ եւ ժողովրդի կողմից ընտրված լինի: Նա երկու իմպերատիվ պահանջ է ներկայացնում նախագահի ինստիտուտին՝ լեգիտիմ լինի, դավաճան չլինի: Եթե նա լեգիտիմ լինի՝ կդառնա ժողովրդից կախված, այ դրանից հետո ինքը կուզենա, որ ԱԺ-ն լեգիտիմ լինի, հետո՝ կառավարությունը լեգիտիմ լինի: Իսկ եթե նախագահը լեգիտիմ չէ՝ուզում է, որ Ազգային ժողովն էլ լեգիտիմ չլինի ու չկարողանա իրեն մեղադրել ոչ լեգիտիմության մեջ. այսինքն՝ ոչ լեգիտիմության հիվանդությունը հասարակության խղճկեղն է: Արտասահմանյան երկրներում եթե նախագահը ոչ լեգիտիմ է սպացվում, նրան հնարավորություն են տալիս լեգիտիմացվելու՝ երկրի մասին մտածելով. օրինակ՝ Բուշն ընտրվեց կեղծիքներով, բայց Գորը եկավ ու նրա ձեռքը սեղմեց եւ հնարավորություն տվեց լեգիտիմացման, որովհետեւ ԱՄՆ-ը չէր դիմանա ոչ լեգիտիմ նախագահ ունենալուն: Բայց լեգիտիմության ամենաստույգ ճանապարհը արդար եւ թափանցիկ ընտրություններն են, ու նախեւառաջ՝ խորհրդարանական, հասարակությունը կարող է ապրել եւ զարգացում ունենալ միայն լեգիտիմ ընտրված պատասխանատվությամբ: «Բարգավաճ Հայաստանին» որ բերել են՝ լեգիտիմության խնդիրն են լուծում. ժողովուրդը գուցեւ գնալու է ու այդ ուժին ընտրի, սա Ազգային ժողովը լեգիտիմացնելու «պրոյեկտ» է, համոզված է Լ. Հարությունյանը. «Սակայն ես գտնում եմ, որ ԱԺ լեգիտիմացման խնդիրը պետք է լուծվի ընդդիմության միջոցով: Վերջինս պետք է պայքարի դրա համար: Ընդդիմությանը նախ արժեզրկել են, այ դրա արդյունքում էլ սիրված են եղել ուրիշ «պրոյեկտ» իջեցնել: Եվ «Բարգավաճ Հայաստանն» ընտրող մեքենայի դեր է սանձնում, լեգիտիմացման մեքենան ստեղծված է: Բայց ես շատ մեծ ափսոսանք կարդամ, եթե լեգիտիմացման խնդիրն ընդդիմության միջոցով չլուծվի, եթե այդ խնդիրն էլ իշխանությունը լուծի: Ընդդիմությունը դեռ շանս ունի. եթե հիմա չմիավորվեց եւ քաղաքական գործոն չդարձավ՝ նրա փոխարինիչը ստեղծված է արդեն: Հարցն այն է, որ ընդդիմության լիդերներն իրենց ավելի են սիրում, քան երկիրը, ես գտնում եմ, որ նրանք այս պահին երկիրն ավելի շատ պիտի սիրեն, եւ պահի խնդիրն իրականացնեն: Ամեն պատմական ժամանակաշրջան ունի իր լուծելիք խնդիրները, սա մենք չենք հնարել, եթե չլուծեց՝ այս խնդիրը չի վերանում, շարունակում է ավելի բարդացած քարշ գալ եւ խոչընդոտել երկրի զարգացմանը: Այսօր մեր երկրի առջեւ ծառացած ամենակարեւոր խնդիրը լեգիտիմության խնդիրն է, ընդդիմությունը պետք է միավորվի՝ այդ խնդիրը լուծելու համար: Մինչդեռ նրանք աշխատում են ոչ թե կառույցի առողջացման, այլ նախագահին հեռացնելու խնդրի վրա: Խնդրի նեղացումը բերում է այս վիճակին»:

Ըստ սոցիոլոգի՝ այլեւս գաղտնիք չէ, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը ատարեզ է իջել խորհրդարանական եւ նախագահական ընտրությունների այս թեժ պահին ոչ քաղաքականացված զանգվածի քվեների միջոցով, այլ՝ իշխանության պահպանման խնդիրը լուծելու առաքելությամբ. «Համաձայնեք, որ աղքատ երկրի հասարակ ընտրողների ականջը եւ հոգին չեն կարող չշոյվել «բարգավաճ» բառից եւ չլուսավորվել այն հույսով, որ մի օր իրենք էլ կբարգավաճեն, եթե անդամակցեն այդ կուսակցությանը: Սակայն, երբ այդ կուսակցությունը չկարողանա լուծել գաղափարախոսության խնդիրը եւ Ազգային ժողով տանի միայն իշխանավորների եւ հարուստների շահերի պատասխանների, ապա ինքնըստինքյան այդ հույսը կմարի: Եվ հայ ընտրողը վերջնականապես կհասկանա, որ իր եւ երկրի բարգավաճումը կարելի է կերտել միայն սեփական ձեռքերով»:

ՄԱՔՐԻԵՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Նախընտրական շրջանում ո՞ր «օբյեկտներում» են սիրում հանդիպել եւ «բանակցել» քաղաքական գործիչները

Բուռն արշավներ ռեստորաններից

Խորհրդարանական ընտրությունների նախաշեմին քաղաքական տարբեր ուժերից եւ գործիչներից գրեթե միշտ լսում ենք, որ նրանք հանդիպում եւ բանակցում են այս կամ այն քաղաքական ուժերի, կուսակցությունների հետ՝ որոշելու, թե ընտրություններին միասնաբար մասնակցելու ինչ հնարավորություններ կան: Ենթադրաբար մեր երկրի քաղաքական գործիչները, որ նույնքան այս «ուսելխմել» սիրող ազգի մի կարեւոր մասն են, չեն կարող հանդիպել գրասենյակային պայմաններում եւ իրենց հույժ կարեւոր հարցերը քննարկել «չոր սեղանի» շուրջը:

Խիստ քաղաքականացված մեր առօրյային մի քիչ այլ երանգ տալու համար **«Ազգը»** որոշեց զրուցել մի քանի հայտնի օբյեկտների տնօրենների կամ ղեկավար անձանց հետ՝ պարզելու, թե նախընտրական շրջանում արդյոք հաճախացե՞լ են քաղաքական գործիչների այցելությունները ռեստորաններ, «հաց ուտելու» եւ գործընկերների հետ զրուցելու համար նրանք ո՞ր վայրերն են նախընտրում, ինչ ուսելիքներ են պատվիրում, ո՞ր ժամերին են հաստատես ճաշում, ինչ երաժշտություն են պատվիրում. գուցե բանակցության հաջող ելքից է կախված՝ նրանք ուրախ երաժշտություն կպատվիրեն, թե ասենք «ծանր մոտամներ»: Ի դեպ, որեւէ դիտավորություն չենք ունեցել որեւէ «օբյեկտի» նկատմամբ եւ հասկանալով բիզնեսի նրբություններն ու քաղաքական գործիչների «գաղտնիքները» բացահայտելու բոլորովին ցանկություն չունենալու հանգամանքը՝ մենք ռեստորանների ղեկավարներին դիմելիս ասացինք, որ իրենք կարող են որեւիցե անուն չտալ:

Սկսենք նրանից, որ ռեստորանատերի հետ զրուցելու մեր ցանկությունը շատ բուռն արձագանք ունեցավ, քանի որ մեր հարցերը նրանք անմիջապես կամ իբրեւ սադրանք էին ընկալում, կամ խնդիրը դիտարկում քաղաքական համատեքստում: Չնայած նրանցից ոմանք մեր որոշ հարցերին ինչ-որ պատասխաններ տվեցին, բայց մի քանիսն էլ խնդրեցին իրենց անունը չտոհափել՝ չընդունելով անգամ այն հանգամանքը, որ փաստորեն իրենց բիզնեսը գովազդվում է մեր թերթի միջոցով:

Բաղրամյան փողոցում գտնվող մի ռեստորանից մեզ խնդրեցին հանգիստ թողնել իրենց, քանի որ իրենք հեռու են քաղաքականությունից: Ավելի ուշ ռեստորանի տնօրենը մեզ հետ հեռախոսազրույցում ասաց, որ իրենց մոտ նույնիսկ սովորական մարդիկ չեն գալիս, ուր մնաց քաղաքական գործիչները այցելեն: Թե ինչու քաղաքական գործիչները չեն գնում այդ ռեստորան, տնօրենը տեղյակ չէ, բայց ենթադրում է, որ ռեստորանի տեղն այնքան էլ հարմար չէ: «Մեզ մոտ ամեն տեղից էլ գալիս են, ճաշում են՝ որպես լավ հաց տվող տեղ եւ ոչ թե քաղաքական հարցեր լուծելու վայր», մեր հարցին այսպես արձագանքեցին «Բելաջիո» ռեստորանից: Պարզ է, նրանք էլ չվստահեցին պարզապես աշխույժ նյութ պատրաստելու մեր ցանկությանը եւ հարցը դիտարկեցին քաղաքական տարրերի համատեքստում:

«Նոյյան տապան» ռեստորանի տիրոջ եղբայրը, որն, ի դեպ, բավական բարեկիրթ էր եւ համբերատար, մեր հարցը լսելուց հետո պատասխանեց, որ նախկինում քաղաքական գործիչներ թեեւ միշ, բայց այցելում էին իրենց ռեստորան: Բայց նախընտրական այս շրջանում նրանք չեն այցելում իրենց, քանի որ, ինչպես նկատեց մեր զրուցակիցը, քաղաքական գործիչները հիմա ավելի շատ լինում են իրենց կուսակցությունների շտաբներում: Կենտրոնում գտնվող մեկ այլ ռեստորանում էլ թեեւ մեզ բավական ջերմ հյուրընկալեցին, խնդրեցին որեւէ կերակրատեսակներ իրենց: Մեր տեղեկություններով, սակայն, այդ ռեստորանում շատ լավ եւ համեղ ուտեստներ են մատուցում, եւ այդ վայրը դարձել է ոչ միայն մեր հայտնիների, այլեւ օտարերկրացիների սիրելի վայրը: Մեզ հետ զրույցում գոհունակությամբ ժպտալով, մեր այդ տեղեկությունը նրանք էլ չժխտեցին, բայց խնդրեցին իրենց անունը չտալ: Լուրջ հավաքույթների վայրի անուն հանած, երկրի շատ կարեւոր անձանցից ոմանց հյուրընկալած շատ հայտնի մեկ այլ ռեստորանի աշխատակիցներից մեկը չժխտեց, որ իրենց մոտ լինում են քաղաքական գործիչներ, բայց նաեւ չցանկացավ ավելին ասել: Հասկանալի է, որ նա էլ չցանկացավ, որ իրենց անունը հնչի:

«Նախընտրական շրջանում հաճախացել են քաղաքական գործիչների այցերը ձեզ մոտ» մեր հարցին «Հին Երիվան» ռեստորանի մենեջերը պատասխանեց, որ ընդհանուր շրջանում չգիտի, բայց ընդհանրապես իրենց մոտ հյուրընկալվում են քաղաքական գործիչներ: «Որն է պատճառը» հարցին նա պատասխանեց. «Երեւի սիրում են մեր հին հայկական ոճը, հին ավանդական հայկական ուտեստները: Հիմնականում պատվիրում են մեր ավանդական հայկական ուտեստները՝ խորոված, ֆյուֆքա, տոլմա, ավելուկ»: Մենեջերի խոսքով, հյուրերը նաեւ երգեր են պատվիրում: Ինչ վերաբերում է քաղաքական գործիչներին ընկերակցողներին, ապա մենեջերի խոսքով՝ գալիս են ոչ միայն գործնական հանդիպումների համար, այլեւ ընկերական շրջապատով, ընտանիքներով:

ԳՈՌՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Իրանը սառնասիրտ խաղախականություն է վարում ԱՄՆ-ի նկատմամբ

Թիրախների ընտրության մասին լուրերը հազիվ թե խախտեն նրա անդրդվելիությունը

Ամեն անգամ, երբ ուժեղանում են ամերիկյան ճնշումները Իրանի վրա, տարածաշրջանում նկատելի ակտիվանում է իրական գործոնը: Փետրվարի 20-ին BBC-ն, վկայակոչելով Պենտագոնի բարձրաստիճան ներկայացուցչին, ի լուր աշխարհի հաղորդեց, թե ԱՄՆ-ն Իրանում արդեն թիրախներ է ընտրել, որոնց թիվը հասնում է 10 հազարի: Ըստ հաղորդման, ամերիկյան զինված ուժերի գլխավոր շտաբում որոված է հարվածներ հասցնել Իրանի միջուկային եւ հակաօդային պաշտպանության օբյեկտներին, ռազմաօդային ու ռազմածովային բազաներին, հրամանատարական կետերին, ինչպես նաեւ նավթային եւ արդյունաբերական կենտրոններին:

Մինչ թիրախների ընտրության մասին հաղորդումով BBC-ն փորձում էր էլ ավելի սրել իրանա-ամերիկյան լարվածությունը, իսկ աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցները, արձագանքելով դրան, համաշխարհային հասարակական կարծիքի օրակարգում էին պահում Իրանի վրա ԱՄՆ-ի հարձակման հարցը, ահա փետրվարի 26-ին NTV-ին հայտարարություն է անում Հյուսիսային Իրաքի իրական վարչակարգի նախագահ Մասուդ Բարզանին:

Թուրական «Միլլիեթը» Բարզանիի հայտարարությանն անդրադարձել է փետրվարի 27-ին: Համաձայն դրա, «Իրաքյան Քուրդիստանի» նախագահն ասել է. «Տարածաշրջանում շուրջ 40 մլն իրական է բնակվում: Անկախ պետականության իրավունք ունեն նաեւ իրանցիները: Ժամանակն է, որ թուրքերը, իրանցիները եւ արաբները հասկանան այս պարզ ճշմարտությունը եւ անկախության մասին հայտարարությունները չընկալեն իբրեւ սպառնալիք: Մոտ թե հեռու ապագայում իրականություն է դառնալու իրերի անկախությունը: Պետք է հաշվել այս իրողության հետ»:

Փետրվարի 28-ին անուղղակիորեն Բարզանիին է հաստատել ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը: ԱՄՆ Սենատի նիստում, արծարծելով PKK-ի հարցը, նա նշել է. «Թուրքիայի եւ Քուրդիստանի սահմանագծին գործող այս կազմակերպությունը պատասխանատու է թուրքական տարածքում կատարվող հարձակումների համար»: Այսինքն, Քուրդիստանի մասին հիշատակել է նաեւ Ռայսը:

«Անկախ Քուրդիստանը», որը դե ֆակտո ստեղծվել է Իրաքի հյուսիսում, ենթադրում է իրական պետության փաստացի մասնատումը: Երկրի մասնատմանն են ուղղված նաեւ ամերիկյան ծրագրեր: Սակայն մասնատման դեպքում Իրաքը մեծապես հայտնվելու է իրանական ազդեցության տակ, որովհետեւ բնակչության 60 տոկոսը կազմող շիաները կողմնորոշվում են դեպի Իրան: Թերեւս այդ առումով պատահական չեն տարածաշրջանում շիաների ազդեցության ծավալումը կանխարգելելու պատճառաբանությամբ Իրանի Իսլամական Հանրապետության դեմ Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի, Հորդանանի եւ Պարսից ծոցի երկրների մասնակցությամբ «սուննիական դաշինք» ստեղծելու ԱՄՆ-ի ջանքերը, առավել եւս PKK-ի այլընտրանքային տարբերակ PJAK-ի զինված գործունեության ակտիվացումն Իրանում:

Իրան-ԱՄՆ բախումներն Իրաքի տարածքում արդեն ծավալվում են: Ի հակակշիռ Իրանի դիմակայությանը, այդ երկրի ներսում ԱՄՆ PJAK-ի միջոցով կազմակերպում է ահաբեկչական գործողություններ եւ փորձում որպես ապակայունացման միջոց օգտագործել նաեւ իրանաբնակ արաբներին: Թե ինչ արդյունքի կհանգեցնեն Իրաքում ամերիկյան ծրագրերին Իրանի դիմակայությունը իրանաբնակ քրդերի եւ արաբների միջոցով հակակշռելու Վաշինգտոնի վերոհիշյալ ձեռնարկումները, ցույց կտա ժամանակը:

Բայց որ Պենտագոնն Իրանում թիրախները վաղուց ընտրած պետք է լինի, ակնհայտ է: Հետեւաբար ԱՄՆ-ի խնդիրը, ինչպես BBC-ն էր ներկայացրել, թիրախների ընտրությունը չէ, այլ ընտրության շուրջը աշխարհով մեկ բարձրացվող աղմուկի օգտագործումը Հյուսիսային Իրաքում քրդական գործոնի ակտիվացման նպատակով, որը ենթադրում է Իրանում PJAK-ի, իսկ Թուրքիայում PKK-ի ակտիվացումը, ինչպես նաեւ Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի, Հորդանանի եւ Պարսից ծոցի երկրների մասնակցությամբ ձեւավորված հակաիրանական դաշինքի համախմբվածությունն ապահովելը:

Ինչ խոսք, «Իրանում շուրջ 10 հազար թիրախի ընտրության» մասին հաղորդումները անկախ Պենտագոնի բուն նպատակներից, ավելի իրատեսական են դարձնում ամերիկյան հարձակումը իրանական պետության վրա, հարձակման սպառնալիքի տակ գտնվող երկրի դեմ միանգամայն հետեւանում է նրա ոտքի եւ արաբ բնակիչների օգտագործումը, իսկ սուննի այն երկրները, որոնք ինքնակամ ընդգրկվել են շիաների դեմ ձեւավորված դաշինքի կազմում, զրկվում են դաշինքից բխող պարտավորությունների առումով Վաշինգտոնին առարկելու հնարավորությունից:

Այդ ընթացքում ուժեղանում է տարածաշրջանային երկրների բեւեռացումը: Դրանով ստեղծվում են խաղախարթություններ միմյանց հակադրելու փոխարեն, հակամարտությունը սուննիներին շիաների դեմ հակադրելու միջոցով, տվյալ խաղախարթության ներսում, այսինքն իսլամական աշխարհում հրահրելու նախադրյալներ: Այլապես, ԱՄՆ-ի նկատմամբ Իրանը վարում է միանգամայն սառնասիրտ խաղախականություն: Թիրախների ընտրության մասին հաղորդումները հազիվ թե խախտեն նրա անդրդվելիությունը, մանավանդ որ Իրանի վրա ամերիկյան հարձակման սցենարներ Վաշինգտոնում շրջանառության մեջ հաճախակի են դրվում:

ՀԱՅԿՈՒՀԻ ՉԱՔԱԲՅԱՆ

Պահեստում շահիդներն են

ԱՄՆ-ի փոխնախագահ Դիկ Չեյնիի հայտարարությունը, որ Իրանի խնդրի լուծման մեջ չի կարելի բացառել ոչ մի տարբերակ, ավելի իրական է դարձնում այդ երկրի ռազմական հարված հասցնելու հավանականությունը: Ռուս զինվորական փորձագետների կարծիքով, ելնելով տարածաշրջանում ամերիկյան ռազմական տեխնիկայի կենտրոնացման տեմպերից եւ քարոզչական ակտիվությունից, ավիացիոն-հրթիռային հարվածի գաղտնի պլանի իրագործումը նախատեսված է մինչեւ ապրիլ: Արդեն Պարսից ծոցում են գտնվում երկու ամերիկյան ականակիրներ, որոնց անհրաժեշտության դեպքում կմիանան եւս երկուսը: Նրանք կրում են հարյուրավոր ինքնաթիռներ, թեւավոր հրթիռներ եւ սպորտներ կառույցների ոչնչացման նորագույն ռումբեր: Այդ մահաբեր «ծովահենները» գտնվում են Իրանից մեկժամյա հեռավորության վրա: Խնդիր է դրված անակնկալ հոծ հարվածներ հասցնել Իրանի բոլոր փոքր թե շատ աչքի ընկնող ռազմական, միջուկային, էներգետիկ օբյեկտներին, շանս չթողնելով, որ իրանցիները կարողանան պատասխանել: Նկատի է առնվում, որ նրանց օդային նավատորմը՝ մոտ 400 ինքնաթիռ, հնացած է եւ անընդունակ դիմակայելու, իսկ հրթիռները աչքի չեն ընկնում ճշգրտությամբ:

Հատուկ անհանգստության առարկա է դառնում (բնականաբար, նաեւ հայերի համար) Բուշերի տակավին անավարտ ատոմակայանի խնդիրը. ապրիլին ռուսները կսկսեն ուրանի մատակարարումները, եւ այնժամ շատ բան կախված կլինի ռուս-ամերիկյան պայմանավորվածություններից: Իսկ բնապահպանության առումով անկանխատեսելի հետեւանքների կհանգեցնեն նավթային օբյեկտների ռմբակոծումները:

Իրանի ղեկավարների ռազմատենչ հայտարարությունները, որ ագրեսորը արժանի հակահարված կստանա, ռուս մասնագետներն ընդունում են որոշակի վերապահությամբ: Բանն այն է, որ այդ հակամարտության մեջ կբացակայի ռազմաճակատի անմիջական գիծը, եւ «աներեւույթ» հակառակորդին դժվար կլինի էական վնաս պատճառել: Բացի այդ, ամերիկացիները կկարողանան օդերաթիռներից շարից հանել հակառակորդի օդանավակայանները:

Այդուհանդերձ, ինչո՞վ կարող է Իրանը վտանգավոր լինել Ամերիկայի համար: Ամենաաղետալին ամերիկացիների համար կլինի շիաների ապստամբությունը Իրաքում: Իրանական պետության կրոնական ղեկավարությունը նյութական ու հոգեւոր մեծ ազդեցություն ունի հարեւան երկրի հավատակիցների վրա եւ կարող է իր օգտին օգտագործել նրանց ատելությունը «անհավատ յանկիների» նկատմամբ: Եվ հետո, Իրանի վրա հարձակումը ահաբեկչության նոր հզոր ալիք կառաջացնի ողջ մահմեդական աշխարհում, որոնք ամերիկացիներին կհետամտեն ոչ միայն Իրաքում կամ առհասարակ Մերձավոր ու Միջին Արեւելքում: Մահմեդականները դեռ երկար չեն մոռանա ամերիկացիների «հակահիսլամական» պայքարը: Համենայն դեպս կարելի է չկասկածել, թե ում դեմ կգործի իրանական «մահապարտների գումարտակը», որի կազմի մեջ ընդգրկված է... 56 հազար իսլամական ռազմիկ, իսկ ավելի պարզ ասած՝ շահիդ: Էլ չենք ասում, որ սա արդեն ոչ թե գումարտակ է, այլ իսկական բանակ:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Մոսկվա

ԴԵՂՈՐԱՅՔ

Ըստ ՄԱԿ-ի, զարգացող երկրներում դեղորայքի 50 տոկոսը կեղծված է

Իսկ ինտերնետային վաճառքի 90 տոկոսն անվերահսկելի է

Նոր զարգացող երկրներում վաճառվող կեղծ դեղամիջոցները երբեմն մահացու վտանգ են պարունակում, նախազգուշացնում է ՄԱԿ-ի թմրանյութերի վերահսկման միջազգային խորհուրդը: Վիեննայում գործող կազմակերպության զեկուցագրում նշվում է, որ այդ երկրներում դեղատոմսով վաճառվող բոլոր դեղամիջոցների մոտ 50 տոկոսը կեղծված է:

Փաստաթղթի հեղինակներն ավելացնում են, որ նման դեղորայքի շրջանառության ծավալը շուտով կգերազանցի արգելված թմրանյութերի համաշխարհային առեւտրի ծավալներին:

Խորհրդի տվյալներով, արդեն այսօր Եվրոպայի, Աֆրիկայի եւ Հարավային Ասիայի որոշ շրջաններում կեղծ դեղորայքի ապրանքաշրջանառությունն ավելի է, քան հերոինի, կոկաինի եւ էքստազիի շրջանառությունը: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, այնտեղ կեղծ դեղորայքի չարաշահումները զիջում են միայն մարիխուանայի սպառման ծավալներին:

Խորհուրդը գտնում է, որ կառավարությունները պարտավոր են խստորեն կիրառել ընդունված օրենքները եւ ինտերնետում դեղորայքի անօրինական առեւտրի խոչընդոտմանն ուղղված նոր օրենքներ ընդունել:

Համացանցից բացի, կեղծ դեղորայքն իրացվում է նաեւ փոստային ծառայության եւ տեղական շուկաների միջոցով:

Կեղծ դեղորայքի շուկան արագորեն ընդլայնվում է: «Մարդկանց առողջությունը ենթարկվում է լուրջ վտանգի: Կեղծված դեղերն անարդյունավետ են, ոչ սանդարտ, որոշ դեպքերում՝ նույնիսկ մահացու», գրում են զեկուցագրի հեղինակները:

ՄԱԿ-ը եւ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը բավարար արդյունավետությամբ չեն պայքարում տվյալ վտանգավոր երեւույթի տարածման դեմ: Խորհրդի նախագահ Ֆիլիպ Էմաֆոն BBC-ի թղթակցին տված հարցազրույցում ասել է, որ սպույգ տվյալների հայթայթումը բավական դժվար է, քանզի շատ երկրներում իշխանությունները չգիտեն, թե վաճառվող դեղորայքի քանի տոկոսն է կեղծված:

Ընդսմին դեղատոմսով վաճառվող սինթետիկ որոշ թմրանյութեր ավելի վտանգավոր են, քան ընդհատակյա թմրադեղերը:

Ըստ զեկուցագրի հեղինակների, Իրանն այսօր աշխարհում առաջատար է ափիոնային նյութերի կեղծման գծով: Սա պատահական չէ, քանզի հարեւան Աֆղանստանն ափիոնային կակաչի աճեցման գլխավոր վայրն է:

Իսկ զարգացած երկրներում մտահոգության առիթ է այն փաստը, որ ինտերնետում դեղորայքի վաճառքը փաստորեն չի վերահսկվում: Վերջերս անցկացված հետազոտությունը վկայում է, որ համացանցի բոլոր դեղատների գրեթե 90 տոկոսը որեւէ տեղեկատվություն չի պահանջում այն դեղամիջոցների վաճառքի ժամանակ, որոնք սովորաբար բաց են թողնվում միայն դեղատոմսերով:



Սիրիան կմասնակցի Իրաքին նվիրված խորհրդաժողովին

Սիրիայի ղեկավարությունը որոշել է ներկայացուցիչներ ուղարկել Բաղդադ, որտեղ անցկացվելու է Իրաքի խնդրին նվիրված միջազգային խորհրդաժողով: Պաշտոնական Դամասկոսը խորհրդաժողով անցկացնելու նախաձեռնությունը բնութագրել է որպես «ճիշտ ուղղությամբ կատարված քայլ»:

Ֆրանսիրեսը հիշեցնում է, որ Իրաքի ղեկավարությունը համաժողովին մասնակցելու հրավերներ է ուղարկել բոլոր հարեւան երկրներին, ինչպես նաեւ Արաբական լիգայի պետությունների, «Իսլամական կոնֆերանս» կազմակերպության եւ ՄԱԿ-ի ԱԽ 5 մշտական անդամների ներկայացուցիչներին: Իրանցիներն արդեն տվել են իրենց համաձայնությունը:

Բաղդադի խորհրդաժողովն արտգործնախարարների մակարդակով տեղի կունենա արդիլին: Ավելի վաղ՝ մարտի 10-ին, տեղի կունենա նախնական հանդիպում ավելի ցածր դիվանագիտական մակարդակով:

Նյու Յորքում արգելվեց «նեգր» բառի կիրառությունը

Նյու Յորքի քաղաքային խորհուրդը քվեարկել է «նիգգեր» («նեգր») բառի արգելման օգտին: Ընդունված բանաձեւը, սակայն, խորհրդանշական բնույթ է կրում, քանզի օրենսդրական կիրառություն չունի եւ պահիժ չի նախատեսում արգելքը խախտողների համար:

Քվեարկությունն ավելի շուտ տվյալ բառի տարածումից հասարակության դժգոհության արտահայտությունն է: «Նիգեր» բառը հատկապես շատ են օգտագործում ամերիկացի երիտասարդները:

Երկար տարիներ այդ բառով իրար դիմել են աֆրոամերիկացի երիտասարդները հեգնական-ընկերական շփումների ժամանակ: Իսկ վերջերս նույն համատեքստով իրար «նեգր» են անվանում էթնիկական մյուս խմբերի ներկայացուցիչները:

Աֆրոամերիկյան համայնքի նշանավոր գործիչներից շատերը պաշտպանում են նյույորքցի օրենսդիրներին, ընդգծելով, որ «նիգգեր» բառը վիրավորական է բոլոր առումներով, քանզի ունի «ոչ միայն հուզական, այլեւ պատմական» երանգ:

Արգելքի կողմնակիցները նշում են, որ բառը հիշեցնում է ստրկության ժամանակները, երբ նեգրերին կարելի էր ապրանքի պես գնել եւ վաճառել:

Բայց այսօր «նիգգեր» բառը դարձել է երիտասարդական մշակույթի անկասելի մասը, նշում է BBC-ն: Եվ բառապաշարից այն հանելու համար հարկ կլինի ավելին անել, քան քաղաքային իշխանությունների որոշումն է:

Պ. Ռ.

ԱԶԳ

Մշակույթ

Անզուգական Օֆելյա Համբարձումյանին

Ո՞ւր է նա, աղբյուր է նա,
Ծառավ սրտի պաղ ջուր է նա,
Վառի նեկտար ու բույր է նա...
(Ժողովրդական)

Այսօր էլ ցնծում է հոգիս՝ Օֆելյա Համբարձումյանի երգը լսելիս: Այն ի՞նչ էր՝ ե՞րգ էր, թե՞ սոխակի դայլայլ: Աստվածային ի՞նչ պարգեւ էր նրա՝ աղբյուրի պես զուլալ ձայնը, արտամորմոք լացն ու հառաչը, սիրո լացն ու կարկաչը...

Մեր ընտանիքում բոլորս երգում էինք: Երգում էինք Կոմիտաս, Կարա-Մուրզա, Տիգրանյան (մեր խմբավարը հայրս էր. ինքը պատանի երգել էր եկեղեցում):

Ինը տարեկան էի: Անսպասելի գերվեցի Օֆելյա Համբարձումյանի երգով: Մեր տան մթնոլորտը գիշեր-ցերեկ հագեցած էր նրա ոյութիչ ձայնով: Հորս հոմդրանքով նամակ գրեցի հոգեզմայլ երգչուհուն: Չպատասխանեց: (Ամաչկոտ էի: Երգում էի միայն մեր տանը: Երգում էի միայն մեզնից համար: Նմանակում էի սիրելի երգչուհու յուրահանչյուր երգը):

Անցան տարիներ: Մեր գեղասանի արյունը խոսեց իմ մեջ. ես էլ մանկավարժ դարձա: Օֆելյա Համբարձումյանի երգը, սակայն, դարձյալ իմ ուղեկիցն էր, ինձ ապրեցնողը...

1969 թ. ամառն էր: Ռադիոն հայկական ժողովրդական երգի մրցույթ էր հայտարարել: Երեք հարյուր պատանիներ եւ աղջիկներ էին մասնակցում այդ մրցույթին: Հանձնաժողովը գլխավորում էր Կոմիտասի անվան երաժշտանոցի պրոֆեսոր Թամար Շահնազարյանը: Այնտեղ էր նաեւ Օֆելյա Համբարձումյանը՝ Տաթեւիկի հետ: Ռադիոկոմիտեի դահլիճն ու միջանցքները լեփ-լեցուն էին մրցույթի մասնակիցներով եւ նրանց ելույթին ուրախությամբ սպասող հարազատներով:

Մրցույթն սկսվեց: Աղագա երգիչները մեկը մյուսի հետեւից հանձնաժողովի «դատին» են ներկայացնում իրենց երգը: Երգեց հոկտեմբերյանցի մի պատանի: Հովհաննես Բաղալյանը արգելեց նրան ընդհանրապես երգել՝ մինչեւ հասունության տարիքը: Մեկ ուրիշը կատարեց Ռուբեն Մաթեւոսյանի երգացանկից «Արդեն մութն ընկել է» երգը: Հանձնաժողովից մեկը նրան թույլ չտվեց շարունակելու՝ ասելով՝ Ռուբենի հետ ընկերություն անողն իրավունք չունի այդպես երգելու: Երգեց եղբայրս: Նրան նույնպես «ցեսություն» ասացին... Հերթն իմն էր: Առանց երկչելու (ի զարմանս ինձ) երգեցի Ռուբեն Մաթեւոսյանի երգացանկից Արմեն Մանդակունյանի «Հովն իջավ սարերի ճամփեով» երգը՝ «Սիրեցի յարս տարան» երգի փոխարեն: Երգի կեսից ընդհատեցին ինձ: Ծափահարեցին: Խստասիրտ հանձնաժողովի վերաբերմունքից մի պահ կարկամեցի եւ, առանց հուզմունքս թաքցնելու, ասացի. «Միշտ երազել եմ այսպես մոտիկից տեսնել Օֆելյա Համբարձումյանին: Ես Ձեզ շատ եմ սիրում: Ես ամենաերջանիկն եմ աշխարհում...»:

Դահլիճն աշխուժացավ... Իսկ երաժշտական հաղորդումների գլխավոր խմբագիր Արմեն Հովհաննիսյանը կատակեց. «Օֆիկ, մաղարիչ ունես»: Օֆելյա Համբարձումյանը կանչեց իր մոտ: Մի ակնթարթ՝ եւ ես նրա ու իր աջակա կողքին էի: Իմ պատմումի երգչուհին թղթի վրա հեռախոսահամարներ գրեց ու տվեց ինձ. «Երկրորդ տուրին իմ երգերից կկատարես, իմ երգերն ավելի լավ կերգես», հորդորեց նա: Վերցրի այդ թղթի կտորը եւ դուրս թռա դահլիճից: Դռների մեջ գրկախառնվեցինք եղբորս հետ: Խոտեռամ բազմությունը հուզմունքով էր դիտում «Մեր հաղթական վալսը»: Իսկ Տաթեւիկը (հանրաճանաչ երգչուհի Տաթեւիկ Հովհաննիսյանը) մեծ ոգեւորությամբ, մինչեւ ուշ երեկո, ինձ հետ կիսեց իմ խինդն ու ծիծաղը:

Հաղթողները տասներկուսն էին:

Մրցույթի երկրորդ տուրին էին նախադասրասվում, հավանաբար, բոլորը: Բացի ինձանից: Անսպասելի հաջողությունից գլուխս կորցրել էի. յոթերորդ երկնքում էի... Մոռացել էի նույնիսկ հեռախոսահամարները...

Հեռակա մանկավարժական ինստիտուտի ուսանողուհի Ֆոյրս իրենց կուրսում պատմել էր մեր մրցույթի մասին: Նրանց երաժշտության դասատուն՝ երգահան Տելեմաք Տեր-Ավետիսյանը (միաժամանակ Լեռնային Ղարաբաղի երգի-պարի համույթի գեղարվեստական ղեկավարը) ցանկություն էր հայտնել զուցել ինձ հետ: Նա 3-րդ կուրսեցիների ներկայությամբ դաշնամուրի իր նվագակցությամբ, լսեց իմ երգերից մի քանիսը եւ առաջարկեց ինձ, որպես մենակատարի, մասնակցել Ստեփանակերտ՝ առանց մրցույթի երկրորդ տուրին մասնակցելու՝ խոստանալով ամենաբարձր աշխատավարձը համույթում: Ես, իհարկե, ժպիտով լսեցի նրան. դա նշանակում էր հրաժարվել «երկնային պարգեւից»...

«Երեւանյան» կոչվող հիվանդությամբ էի տառապում: Հաղթական վերելքից օրեր անց հայտնվեցի անկողնում: Մի քանի օրվա տառապալից ցավերից հետո դուրս եկա տանից ու դանդաղ քայլերով գնացի Ռադիոտուն՝ երկրորդ տուրին մասնակցելու: Հիվանդությունը «խամել էր» ինձ. ուժ չունեի ոչ քայլելու, ոչ էլ երգելու...

... Լսում եմ իմ ազգանունը: Բարձրանում եմ նստարանից ու մոտենում հանձնաժողովին: Փորձում եմ երգել «Նազելիս» երգը... Ավա՜ղ, ձայնս չի լսվում, երգել չեմ կարող...

Գլխիկոր թողեցի դահլիճն ու... Քսաներեք տարի չերգեցի...

... Մայրս ծերունական անկողնում էր: Մահամերձ հիվանդ էր երիտասարդ տարիների իմ երգի համբերատար ունկնդիրն ու հրճվանքի աղբյուրը, առաջին գնահատողն ու ոգեւորողը: Մայրս ինձ չէր ճանաչում՝ զայրույթով ու անձս վիրավորելով հարցնում էր. թե ո՞ւմ աղջիկն եմ ես եւ ինչո՞ւ իրենից չեմ հեռանում (իմ մշտական ներկայությունը, հավանաբար, հոգնեցրել էր նրան. մյուս զավակները հաճախ չէին այցելում իրեն): Մեծ էր հոգու ցավը: Ելք էի փնտրում՝ ելք չկար: Այդ օրն էլ մորս հերթական վիրավորանքը «կոպ տալով»՝ անզորությունից սկսեցի երգել: Երգում էի իմ անմոռանալի Օֆելյա Համբարձումյանի երգերը: Երգեցի, երգեցի, վերջ չկար երգիս...

Եվ, օ՜, հրաշք, մայրս պայծառ աչքերով նայեց ինձ ու ասաց.

- Մարի՛, ինչ լավ ես երգում: Օֆելյայի նման ես երգում, բա, ինչո՞ւ չես գնում երգչուհի դառնաս...

- Ո՞ւր է, շա՜տ է ուր. արեւն արդեն մայրամուտ է թեքվել...

ՄԱՐԻԱ ՈՍԿԵՈՒ

Ներկայացավ մանրանկարիչ Մերուժան Շահումյանը

Փետրվարի 22-23-ը, Հայ Առաքելական սուրբ եկեղեցու վիրահայոց թեմի առաջնորդարանին կից մշակույթի հարցերով հանձնախմբի նախաձեռնությամբ եւ ՀՀ դեսպանատան աջակցությամբ, Վրաստանի մշակութային փոխհարաբերությունների կենտրոն «Կովկասյան տանը» գործեց անվանի մանրանկարիչ Մերուժան Շահումյանի «Ավետարանի մանրանկարներ» խորագիրը կրող անհատական ցուցահանդեսը:

Մերուժան Շահումյանը ծնվել է 1951 թվականին, Թբիլիսիում: 1980 թվականին ավարտել է Թբիլիսիի գեղարվեստի ակադեմիան: 1982 թվականից նրա կտավները ցուցադրվել են տարբեր գեղարվեստական ցուցահանդեսներում: Արվեստի իր ասպարեզում (թերեւ միակը վիրահայ իրականության մեջ), նա առաջին անգամ էր ցուցադրվում ծննդավայրում, թեեւ արդեն անհատական ցուցահանդեսներով հանդես էր եկել Մոնրեալում եւ Տորոնտոյում, իսկ 2006-ին՝ Ջավախքում: Մերուժան Շահումյանի հեղինակությամբ առանձին աշխատանքներ ամփոփված են ԱՄՆ-ի, Կանադայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Հայաստանի եւ Վրաստանի անհատական հավաքածուներում:

«Կովկասյան տանը» բացված ցուցահանդեսին ներկայացված էին նախքան քառասուն, մանրանկարներ՝ սվարաքղթին, այդ թվում՝ «Խորհրդավոր ընթրիք», «Սուրբ Մաշտոց», «Սուրբ Ծնունդ», «Փախուստ դեպի Եգիպտոս», «Սուրբ Գետոց», «Ավետում», «Արցախի Մայրիկ Մայր Աստված», «Նարեկացի», «Շուշանիկ», «Սուրբ բժշկություն», «Դժոխքի ավերում» եւ շուրջ 50 այլ աշխատանքներ: Բացառիկ ու հետաքրքրական էին նաեւ նախաբազարդ ու լաքարաս ձվաձեւ փայտերը: Երեկոյին, որ սովորականից ավելի բազմամարդ էր, ելույթ ունեցան Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Վրաստանում ՀՀ դեսպան Հրաչ Սիլվանյանը, «Կովկասյան տան» տնօրինուհի Նաիրա Գելաեվիլին, Վրաստանի ՀՀՄ փոխնախագահ, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Վան Բայբուրդյանը, վիրահայ բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, Վրաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանի խորհրդական Նիկոլայ Կորչմարը եւ այլք: Հնչած բարի խոսքերն ու գնահատականներն էլ ավելի բացահայտեցին մանրանկարչի կողմից արարվող հնավանդ արվեստի անհրաժեշտությունը նորոյա մեր կյանքում, որովհետեւ Ավետարանի ծանոթ սյուժեներին՝ ինքնադրոշմ ու շեշտված անհատականությամբ մոտեցող մանրանկարչի հզոր հավատից ու զորեղ աղոթքից ծնված ճշմարիտ արվեստում գտնում ես սփոփանք, մխիթարություն, բյուրեղանում ես... իսկ դա հաճախ խորհրդակում է յուրահանչյուր թշնամություն, չարիք...

Նշենք, որ ասվածահաճո այս նախաձեռնությունը թվով երրորդն է (նախորդ երկու միջոցառումներին ցուցադրվել էին վիրահայ լուսանկարիչների եւ Ռոբերտ Ներսեսովի գեղարվեստից ստոտիայի սաների ստեղծագործությունները) արգասաբեր այն համագործակցության, որ ավանդույթ որպես ձեւավորվել է «Կովկասյան տան» ու Հայ Առաքելական սուրբ եկեղեցու վիրահայոց թեմի միջեւ:

ՄԱՐԻԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԵՆՔ ԵՐԿԱՅԱՏԱՆՈՒՄ ԵՆՔ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Տաղանդավոր եւ կենսուրախ թավջութակահարուհին՝ Անի Գալայջյան

Քսանհինգ տարեկանում արդեն փնտրված եւ հարգանք ներշնչող թավջութակահարուհին աննախընթաց հաջողություններ է արձանագրել Մ. Նահանգներում, Կանադայում եւ եվրոպական երկրներում ունեցած իր ելույթներով, գրում է Արփինե Քոչարյանը Նյու Յորքից:

Անի Գալայջյանը սկսել է թավջութակի դասերի հետեւել 4 տարեկանից, երբ իր ընտանիքը ԱՄՆ է տեղափոխվել Միջին Արեւելքից: Պարը, որ թավջութակի դասատու է եղել, 1960-ականներին Մ. Նահանգներում տեղական նվագախումբ է կազմել եւ փաստորեն հետագայում դարձել Անիի ներշնչման աղբյուրը: Անին սովորել է նախ Մանհեթենի երաժշտական դպրոցում, ապա Նյու Յորքի Ման երաժշտական քոլեջում: Մագիստրոսի կոչման է արժանացել Մանչեստրի (Մեծ Բրիտանիա) երաժշտության արքայական Հյուսիսային քոլեջում: Վերջերս հաղթանակել է Անգլո-Չեխական Տրաստի կազմակերպած մրցույթում եւ պարգեւատրվել Բոհոլավ Մարտինու հիմնարկության մրցանակով: 2006 թվին ելույթներով հանդես է եկել Պորտլենդում (Մեյն), Հոլանդիայում, Չեխիայում եւ Անգլիայում: Նախատեսվում են նրա մենահամերգները Մոնրեալում եւ Նյու Յորքի Քարնեգի հոլում այս ամսվա 31-ին:

«Անիի երաժշտությունը համեմված է իր բնավորության ջերմագույն հատկանիշներով: Նա համերգներին երջանկություն է բերում եւ առատաձեռնորեն բաժանում այդ զգացմունքն իր հանդիսատեսին», նշել է Լինկոլն կենտրոնի կամերային երաժշտության բաժնի գեղարվեստական տնօրեն Դեյվիդ Ֆինկելը:

Հ. Օ.

Գրվագներ հրաշամանուկների կյանքից

Միլանի կոնսերվատորիան կրում է Ջ. Վերդիի անունը, ժամանակին նրան չեն ընդունել այդ նույն կոնսերվատորիա: Ժ. Բիզեի «Կարմեն» օպերայի պրեմիերայի ֆիասկոյանը այնպիսի բնույթ է կրել, որն առագացրել է հեղինակի մահը: Անտոն Վեբեռնը Իսպանիայում անհաջողություն կրեց, նվագախումբը դիրիժորի խստապահանջությանը չդիմանալով՝ չընդունեց նրան: Աշխարհի հայտնի, մեծանուն երաժիշտների կյանքից պատառիկներ հավաքել ու մի գողտրիկ գրքույկ է ստեղծել **Դանիել Երաժիշտը**: «Հրաշամանուկների» առաջին պրակը լույս է տեսել պետպատվերով՝ օրեր առաջ: Աշխարհի մեծանունների մասին հետաքրքրաշարադրյալ տեղեկություններ պարունակող այս փոքրիկ ժողովածուն («Ծիծեռնակ» հրատ.) կարծում եմ իբրեւ օժանդակ ձեռնարկ անհրաժեշտ կլինի մեր դպրոցների այն ուսուցիչներին, ովքեր զուտ առարկայական ծրագրերի շրջանակներով չեն սահմանափակվում եւ իրենց նեղ մասնագիտական հետաքրքրություններից դուրս խնդիր ունեն իրենց սաներին մշակութային տեղեկություններ փոխանցելու ոչ միայն հայ իրականությանը վերաբերող: Հատկապես մանկապատանեկան գրականության եւ հաղորդումների նվազման պարագայում նմանաբնույթ մատչելի գրականությունը կարող է բավական շահեկան լինել՝ նրանց պատկերացումների մեջ որոշակիորեն տեղաբաշխելու առումով:

Հեղինակների ընտրությունը ժամանակային կամ աշխարհագրական որեւէ համակարգման չի ենթարկված: Ա. Ռուբինշտեյնի «Ես երեխա չեմ եղել» խոսքերը խորհրդանշորեն բնորոշում է ասվածային մեծ շնորհներով օժտված անհատներին, թերեւս այո, նրանք երբեք մանուկ չեն էլ լինում (մտքով): Շոպեն, Մոցարտ, Յան Կուբելիկ, Ժան Տեր-Մերկերյան, Ռուբեն Սահարոնյան, Իցիակ Պերլման, Եհուդի Մենուհին, որոնց տաղանդի նշանները ի հայտ են եկել վաղ մանկությունից: Հրաշամանուկների ամենավառ շրջանը բացվում է 10-12 տարեկան հասակում: Մոցարտը փոքր տարիքից եվրոպական տարբեր երկրներում արդեն հյուրախաղեր ուներ: Մի երիտասարդի հարցին, թե ինչպե՞ս է սիմֆոնիա հորինում, նա խորհուրդ է տալիս սկսել հետեւ գործերից: «Ապա դու ինչպե՞ս ես սկսել մեծ գործերից»: Մոցարտը պատասխանել է. «Բայց չէ՞ որ ես ոչ մեկին չեմ հարցրել, ինչպես ստեղծագործեմ»: Մարդկության պատմության ամենահանճարեղ երեւույթներից մեկը՝ Մոցարտը, 10-11 տարեկանում արդեն բացվեց իր տաղանդի շեղ փայլով, նա մի շարք կոնցերտների, սիմֆոնիաների, օրատորիայի հեղինակ էր: 14 տարեկանում Հռոմի պապը նրան պարգեւատրում է Ոսկե շքանշանով, ընտրվում է Բոլոնիայի ֆիլհարմոնիկ ակադեմիայի անդամ:

Այդ «ուշ-ուշ եկող, բայց ոչ ուշացած հանճարները գալիս են ճիշտ ժամանակին» ու իրենցով են ստեղծում այդ ժամանակը, միջավայրը, մտածողությունն ու չնայած՝ որպես կանոն, իրենց մենությանն ու օտարացմանը, պատմության կերտողն են ու երաշխավորները մարդկային կեցության շարունակելիության: Ահա նրանցից մեկը՝ Ալբերտ Շվայցեր՝ մեծագույն մտածող, ասվածաբան, երգեհոնահար, Բախի երաժշտության լավագույն ուսումնասիրող-մեկնաբան, քրիստոնյա մի առաքյալ, որ Աֆրիկան գաղութացնելու եվրոպական մոլուցքի տարիներին թողնում է Փարիզի բարեկեցիկ կյանքը եւ մեկնում ջունգլիներ, Գաբոնում հիվանդանոց է կառուցում՝ բորոտներին բժշկելու, քրիստոնեության ոգունքը տարածում զրկանքների ու տառապանքների գնով. «Ես մի կյանք եմ, որ տենչում է ապրել ուրիշ կյանքերի խորքում», ասել է նա:

Այսպիսի հոգեմտային բարձր աշխարհ ունեցողներին է վկայակոչում ու ընտրում Դանիել Երաժիշտը «ոգու սովի» ու բարոյազրկումների վտանգավոր եզրագծին հասած մեր օրերում՝ որպես անհրաժեշտ հիշեցում կամ ոգեկոչում: Գրքույկը շարունակական բնույթ է կրելու, պատրաստվում է II պրակը, որ կհանձնվի հրատարակության: Մինչ այդ նկատենք, որ կազմելիս կարելի է համակարգված եւ ավելի ամբողջական մոտեցում ցուցաբերել: Մինչ մեծերի ու նշանավոր անձանց կյանքի հետաքրքրական էպիզոդների մասին խոսելը, կարելի է հակիրճ տեղեկություններ տալ, օրինակ՝ Ալբերտ Շվայցերի պարագայում, թերեւս քչերին է հայտնի նրա անունը:

ՄԵԼԻՆԵ ԲԱԲԱՅԱՆ

Կիբեռսպորտը Հայաստանում զարգացում է ապրում

Այսօր կորոշվեն Եվրոպայի առաջնության հայ մասնակիցները

Երեկ ՆՓԱԿ-ում մեկնարկեց կիբեռսպորտի ազգային պրոֆեսիոնալ լիգայի կազմակերպած ռակավորման մրցումների փուլը, որի հաղթողները Հայաստանը կներկայացնեն մարտի 15-28-ը Գերմանիայի Հաննովեր քաղաքում կայանալիք Եվրոպայի առաջնությանը:

Ինչպես տեղեկացանք կիբեռսպորտի ազգային պրոֆեսիոնալ լիգայի նախագահ **Էդգար Սահակյանից**, մրցումներին մասնակցում են Երևանից ու մարզերից ժամանած 100-ից ավելի մարզիկներ: Մասնակիցների միջին տարիքը 16-25-ն է, ավելի ցածր տարիք ունեցողները մրցումներին թույլատրվում են մասնակցել ծնողների համաձայնությամբ:

Կիբեռսպորտի համաշխարհային կոմիտեի կողմից ներկայացված ցանկից ընտրվել են համակարգչային չորս խաղեր: Դրանցից երեքից (FIFA 07, WarCraft3: The Frozen Throne, Need For Speed: Carbon) կանցկացվեն ընտրական փուլի մրցումներ, իսկ չորրորդ խաղը (Half-Life: Counter Strike: Source) կլինի ցուցադրական, որպեսզի հնարավոր լինի պարզել այդ խաղի նկատմամբ հետաքրքրության աստիճանը:

Մրցումների յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի իր ուժերը փորձել միայն մեկ խաղում: Մուտքավճարը 3000 դրամ է: Օլիմպիական մրցակարգով անցկացվող մրցումների արդյունքում այսօր հայտնի կդառնան այն երեք երջանիկները, որոնց բախտ կվիճակվի Հայաստանը ներկայացնել Հաննովերում կայանալիք Եվրոպայի առաջնությունում, որտեղ գլխավոր մրցանակների համար մրցավեճի կբռնվեն 30 երկրների պատվիրակներ:

Ընթերցողներին տեղեկացնենք, որ կիբեռսպորտի ազգային պրոֆեսիոնալ լիգան Հայաստանում հիմնադրվել է 2005 թ. դեկտեմբերին: Այնպես որ, այս մարզաձևը, որը պաշտոնապես արդեն գրանցված է աշխարհի 60 երկրներում, դեռևս նոր է սկսում արմատավորվել մեր հանրապետությունում: Անցյալ տարի առաջին անգամ կազմակերպվեցին մրցումներ կիբեռսպորտից: Մեր երեք մարզիկները՝ Արմեն Աբրահամյանը, Արսեն Գյուլգյուլյանը եւ Կարեն Հակոբյանը, որոնք հաղթող էին ճանաչվել ռակավորման մրցումներում, առաջին անգամ մասնակցեցին Իտալիայի Մոնձա քաղաքում կայացած կիբեռսպորտի աշխարհի առաջնությանը: Իհարկե, մեր մարզիկների արդյունքները համեստ էին, սակայն հաշվի առնելով մի շարք հանգամանքներ, պետք է ելույթները բավարար համարել:

ՖՈՏՈԼՈՒՐ

Ըստ Էդգար Սահակյանի, կիբեռսպորտով զբաղվողների համար առայժմ ցավոտ հարցերից մեկն ինտերնետային որակյալ կապի բացակայությունն է Հայաստանում, ինչը հնարավորություն չի տալիս նրանց մասնակցելու ինտերնետային ցանցով կազմակերպվող միջազգային մրցումներին: Ուստի միակ հնարավորությունն առայժմ աշխարհի ու Եվրոպայի առաջնություններին մասնակցելն է: Եվ լավագույններին ընտրելու նպատակով կազմակերպվելու են ընտրական մրցաշարեր: Նշենք, որ անցյալ տարի ռակավորման մրցումներն անցկացվել են համակարգչային ակումբներում: Առաջին անգամ այս տարի մրցաշարը կազմակերպվել է ՆՓԱԿ-ի ընդարձակ սրահում, որտեղ հնչում էր հաճելի երաժշտություն, երեկոյան կազմակերպվեց դիսկոտեկ մասնակիցների համար, որոնք ապահովված էին նաեւ անվճար սնունդով: Նշենք նաեւ, որ միջազգային մրցումներին մեկնելու ծախսերի 70 տոկոսը հոգում է կիբեռսպորտի ազգային պրոֆեսիոնալ լիգան:

Այս տարի բացի Եվրոպայի առաջնությունից, կիբեռսպորտի Հայաստանի ներկայացուցիչները կմասնակցեն նաեւ մայիս-հունիսին կայանալիք աշխարհի գավաթի խաղարկությանը եւ պշնանը տեղի ունենալիք աշխարհի առաջնությանը:

Բնականաբար, այդ մրցումների հայաստանցի մասնակիցներին էլ ի հայտ բերելու համար կանցկացվեն որակավորման մրցումներ: Իհարկե, դժվար է գուշակել, թե հայ մարզիկներն ինչպես հանդես կգան Եվրոպայի առաջիկա առաջնությունում, սակայն Էդգար Սահակյանի կարծիքով մեր մարզիկների ընդհանուր պատրաստվածության մակարդակը բավական բարձր է, տրամադրվածությունն էլ լուրջ է, ինչը հուսադրող է:

Ներկայումս աշխարհում կիբեռսպորտում առաջատար դիրքեր են գրավում ԱՄՆ-ն, Կանադան, Գերմանիան, Կորեան, Չինաստանը, Ռուսաստանը, Շվեդիան, Նորվեգիան, որտեղ ինֆորմացիոն տեխնոլոգիաները զարգացման բարձր մակարդակի վրա են: Կիբեռսպորտի աշխարհի առաջնություններն անցկացվում են 2000 թ.-ից: Հոկտեմբերին կայացած առաջին մրցաշարում հանդես են եկել 17 երկրների 174 մասնակիցներ: Հաջորդ տարի արդեն որակավորման մրցումներին մասնակցել էին 120 հազարից ավելի մարզիկներ: Իսկ աշխարհի առաջնության եզրափակիչ փուլն անցկացվեց Կորեայում, որին մասնակցեցին 45 երկրների 470 պատվիրակներ:

2003 թ. որակավորման փուլում արդեն հանդես են եկել 600 հազար մասնակիցներ: Իսկ եզրափակիչն անցկացվել է Սեուլի օլիմպիական մարզադաշտում, որին մասնակցել են 55 երկրների 562 պատվիրակներ: Անցյալ տարի առաջին անգամ աշխարհի առաջնությունն անցկացվեց Եվրոպայում՝ Իտալիայի Մոնձա քաղաքում, որում ինչպես արդեն նշել ենք, իրենց նորամուծը նշեցին հայ մարզիկները: Հուսանք, որ կիբեռսպորտի մեր ներկայացուցիչներն այս տարի ավելի հաջող հանդես կգան միջազգային ասպարեզում:

ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ռաուլն ամրապնդեց ռմբարկուի իր դիրքերը

Մադրիդի «Ռեալի» հարձակվող Ռաուլը Չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչում 2 անգամ գրավելով «Բավարիայի» դարպասապահ Օլիվեր Կանի դարպասը, ոչ միայն նպաստեց իր թիմի հաղթանակին, այլեւ ամրապնդեց դիրքերը ռմբարկուների ցուցակում: Չեմպիոնների լիգայում (առանց որակավորման փուլի հանդիպումների) խփած գոլերի քանակը Ռաուլը հասցրեց 56-ի: Երկրորդ տեղում ընթացող Ռուդ Վան Նիստելոյը խփեց իր 48-րդ գոլը, իսկ Անդրեյ Շեւչենկոն գոլերի թիվը հասցրեց 45-ի:

Եթե հաշվի առնենք Եվրոգավաթներում խփած գոլերի քանակը, ապա Ռաուլն ու Շեւչենկոն իրենց օգտին գրանցել են 58-ական գնդակ: Այնպես որ, նրանք սպառնում են գերմանացի լեգենդար ռմբարկու Գերդ Մյուլլերի ռեկորդին, որը Եվրոգավաթներում ընդհանուր առմամբ խփել է 62 գնդակ: Երրորդ ցուցանիշն ունի լեգենդար մեկ այլ ֆուտբոլիստ՝ պորտուգալացի Էյուսեբիոն 56 գոլ: Լավագույն հնգյակը եզրափակում է Ֆիլիպո Ինձագին՝ 55 գոլ:

Իսկ եթե հաշվի առնենք նաեւ Չեմպիոնների լիգայի որակավորման փուլերում խփած գոլերը, ապա այդ մրցաշարերի լավագույն ռմբարկուն կդիտվի Ռաուլն է՝ 56 գոլ: Նրան մեկ գնդակով է զիջում, Անդրեյ Շեւչենկոն: Իսկ լավագույն եռյակը եզրափակում է Ռուդ վան Նիստելոյը՝ 52 գոլ:

Չեմպիոնների լիգայի խաղարկությունների լավագույն ռմբարկուների տասնյակը հետեւյալ տեսքն ունի:

1. Ռաուլ	«Ռեալ»	56
2. Ռուդ վան Նիստելոյ	«Ռեալ»	48
3. Անդրեյ Շեւչենկո	«Չելսի»	45
4. Թյերի Անրի	«Արսենալ»	42
5. Ֆիլիպո Ինձագի	«Միլան»	35
6. Ալեսանդրո դել Պիերո	«Յուվենթուս»	32
7. Ֆերնանդո Մորիենտես	«Վալենսիա»	32
8. Պատրիկ Կլույվերտ	«Էյնդհովեն»	29
9. Տավիթ Տրեզեգե	«Յուվենթուս»	28
10. Ռոյ Մաքայ	«Բավարիա»	28

ՀԱՄԱՐ

Մեկնարկում է Լինարեսի մրցաշարի երկրորդ շրջանը

Այսօր իսպանական Լինարես քաղաքում մեկնարկում է շախմատի ավանդական մրցաշարի երկրորդ շրջանը: Հիշեցնենք, որ մրցաշարի առաջին կեսն անցկացվել էր մեքսիկական Մորելիա քաղաքում: 7 տուրից հետո աղյուսակը 4,5-ական միավորով գլխավորում են Վիշվանաթան Անանդն ու Մագնուս Կառլսենը: Լետո Արոնյանը Պյոտր Սվիդլերի հետ 3,5 միավորով բաժանում է 4-5-րդ տեղերը: Արոնյանը առավելության հասավ Անանդի նկատմամբ, իսկ ավարտական տուրում կրեց միակ պարտությունը Վասիլի Իվանչուկից: Մյուս մասնակիցների հետ պարտիաներում գրանցվել են ոչ-ոքիներ:

Նշենք, որ առայժմ միայն ռուսաստանցի Պյոտր Սվիդլերը չի ճաշակել պարտության դառնությունը: Հենց Սվիդլերի հետ մրցախաղով էլ Արոնյանն այսօր կմեկնարկի Լինարեսում: Հայ շախմատիստը խաղալու է սպիտակներով: Ավելորդ չէ հիշեցնել, որ Լեւոն Արոնյանը Լինարեսի նախորդ մրցաշարի հաղթողն է եւ անշուշտ կձգտի պահպանել տիտղոսը: Նա անցյալ տարի առաջին անգամ մասնակցեց Լինարեսի գերմրցաշարին եւ առաջին իսկ փորձից նվաճեց պատվավոր մրցանակը:

Լինարեսի մրցաշարի հաղթողը հայտնի կդառնա մարտի 10-ին: Մրցանակային ընդհանուր հիմնադրամը 314 հազար եվրո է: Հաղթողը կպարգեւատրվի 100 հազար եվրոյով, 2-րդ տեղը զբաղեցնողը կստանա 75 հազար եվրո, 3-րդը՝ 50 հազար: Բոլոր մասնակիցներն էլ դրամական պարգեւի կարժանանան: Վերջին տեղը զբաղեցրած շախմատիստը կստանա 11 հազար եվրո:

Ռոմարիոն մոտ է նպատակին

Բրազիլացի Ռոմարիոն մոտ է իր երազանքի իրականացմանը: Բրազիլիայի գավաթի խաղարկության հերթական խաղում նա դարձավ «Վասկո դա Գամայի» խփած 6 գոլերից երկուսի հեղինակը: Առաջին գնդակը 41-ամյա Ռոմարիոն խփեց 43-րդ րոպեին 11 մ հարվածով, իսկ 2-րդ գնդակը մրցակցի դարպասն անցկացրեց 76-րդ րոպեին: Այժմ բրազիլացի ֆուտբոլիստի հաշվին ընդհանուր առմամբ գրանցված է 992 գոլ: Այնպես որ, հոբելյանական՝ 1000-րդ գոլի սահմանագիծը հասնելու համար նրան անհրաժեշտ է խփել եւս 8 գնդակ:

Հանդիպումը մնաց անավարտ

Իսպանիայի գավաթի խաղարկության «Սեւիլիա»-«Բետիս» հանդիպումը մնացել է անավարտ: Երկրորդ խաղակեսի սկզբին, երբ Կանուտեն գրավել է «Բետիսի» դարպասը, տրիբունայից նետված առարկայից գիտակցությունը կորցրել է «Սեւիլիայի» գլխավոր մարզիչ Խուանդե Ռամոսը: Խաղը դադարեցվել է, մարզչին շտապ տեղափոխել են հիվանդանոց, որտեղ բժիշկներին հաջողվել է անհրաժեշտ օգնություն ցույց տալ տուժածին: Այդ միջադեպից հետո «Սեւիլիայի» ֆուտբոլիստները մարզիչների ցուցումով լքել են խաղադաշտը եւ հեռացել հանդերձարան:

Ամենայն հավանականությամբ «Բետիսին» պարտություն կգրանցվի: Նշենք, որ մրցակիցների առաջին խաղում հաշիվն այդպես էլ չէր բացվել: Ընդհանրապես Սեւիլիայի ֆուտբոլային այդ երկու թիմերի մրցավեճերն անցնում են լարված մրցապայքարում, իսկ թիմերի երկրպագուները թշնամաբար են տրամադրված միմյանց հանդեպ:

Ուլրիխը վճռել է հեռանալ

1997 թ. «Տուր դը Ֆրանս» հեծանվավազքի հաղթող, գերմանացի հանրահայտ հեծանվորդ Յան Ուլրիխը, որ մեղադրվում էր դոպինգի օգտագործման մեջ, հայտարարել է մարզաձեւին հրաժեշտ տալու իր որոշման մասին: 33-ամյա հեծանվորդը որոշել է խորհրդատու մարզիչ աշխատել ավստրիական «Ֆոլկսբանկ» թիմում: «Ես ավարտում եմ ելույթներս մեծ սպորտում: Որոշում ընդունելն այնքան էլ հեշտ չէր, սակայն երբեմն անհրաժեշտ է լսել ներքին ձայնդ: Առաջարկություններ ունեի մի քանի թիմերից, սակայն որոշեցի հեռանալ: Կայացրածս վճռի վրա իր ազդեցությունն է ունեցել իսպանական սկանդալը, որի պատճառով ինձ կարծես հանցագործ էի զգում», հայտարարել է Յան Ուլրիխը:

Հիշեցնենք, որ հեծանվորդը Իսպանիայում ծագած դոպինգային սկանդալում մեղադրվողներից մեկն էր եւ մի քանի ամիս նրա գործը հետաքննվում էր: Սակայն Ուլրիխին չպատժեցին: Բայց այդ ընթացքում ամոնը նրան հեռացրին «T-Mobile» թիմից:

Շարապովան մրցանակի հավակնորդների թվում է

Laureus համաշխարհային մարզական ակադեմիան հրապարակել է ամենամյա մրցանակաբաշխության մասնակիցների ցանկը: Անցած տարվա արդյունքներով տարվա լավագույն մարզիկի մրցանակին հավակնում են թենիսիստ Ռոջեր Ֆեդերերը, «Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի աշխարհի յոթակի չեմպիոն Միխայիլ Շումախերը եւ գոլֆիստ Թայգեր Վուդսը:

Լավագույն մարզուհու մրցանակի թեկնածուների ցանկում են ռուսաստանցի թենիսիստուհի Մարիա Շարապովան, ֆրանսիացի թենիսիստուհի Ամելի Մորեսմոն եւ լողորդուհի Լաուրա Մանադուն: Մրցանակաբաշխությունը տեղի կունենա ապրիլի 2-ին Բարսելոնում, որում, բացի նշված անվանակարգից, մրցանակներ կբաշխվեն նաեւ այլ անվանակարգերում, ինչպես նաեւ կորոշվի տարվա լավագույն թիմը:

Իվանովի արդյունքը լավագույնն է աշխարհում

Թեթեւ atլետիկայի Ռուսաստանի ձմեռային առաջնությունում սկավառականետման մրցումներում Ալեքսանդր Իվանովը ցույց տվեց այս մրցաշրջանում աշխարհի լավագույն արդյունքը՝ 86,26 մ: Երկարատեւ ընդմիջումից հետո մրցապարեզ դուրս եկած Սերգեյ Մակարովը բավական լավ հանդես եկավ՝ ցույց տալով 78,90 մ արդյունք:

Ծննդաբերությունից հետո առաջին անգամ մրցումների մասնակցած օլիմպիական չեմպիոնուհի Օլգա Կուզենկովան մուրճի նետման հաստատում հաղթող ճանաչվեց 55,10 մ արդյունքով: Իսկ Նիկոլայ Սեդյուկը սահմանեց Ռուսաստանի պատանեկան ռեկորդ սկավառակի նետման մրցումներում (62,43 մ):

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

4 մեղադրանք հայ երիտասարդներին (յուրաքանչյուրը 5 տարի բանտարկություն է նախատեսում)

Ինչպես արդեն հաղորդել ենք «Ազգի» երեկվա համարում, Մ. Նահանգների Ռոդ Այլենդ նահանգի Կովենթրի քաղաքում երկուշաբթի երեկոյան ձերբակալվել են Կալիֆոռնիայից եկած 4 հայ երիտասարդներ, որոնք ամբաստանվում են բանկային հաճախորդների անձնական տվյալների օգտագործմամբ կեղծ դեբիտ կամ ATM քարտեր պատրաստելու եւ տարբեր բանկերից ավելի քան 100.000 դոլար քաշելու մեջ:

Ըստ «Բոստոն գլոբ» թերթի չորեքշաբթի օրվա հաղորդագրության, 4 երիտասարդները՝ Հարություն Շաստարեյանը (20 տ.), Գեւորգ Բալթաջյանը (20 տ.), Միքայել Ստեփանյանը (28 տ.) եւ Արմեն Տեր-Եսայանը (22 տ.) «Ստոդ էնդ շոդ» սուպերմարկետում են հայտնվել մոտ 10 օր անց այն պահից, երբ Քուինսիում տեղակայված հեռազոտական ցանցը հայտնաբերել է նրանց արարքը եւ անմիջապես տեղյակ պահել Նյու Ինգլենդում, Նյու Յորքում եւ Նյու Ջերսիում գործող իր 385 խանութների ղեկավարներին: Դրանից առաջ նրանք մնացել են մի մոթելում Կոնեկտիկուտ նահանգում եւ ըստ գաղտնի ծառայությունների Պրովիդենսի գրասենյակի վարիչ Թոմաս Փաուերսի, կարող են կապված լինել Լաս Վեգասում, Մայամիում, Ֆիլադելֆիայում եւ Ռիչմոնդում նմանատիպ արարքների պատասխանատուների հետ:

«Սա նոր տեսակի հանցագործություն է, որտեղ ատրճանակ չի օգտագործվում: Նրանք թոցնում են մարդկանց անունները ու հաշիվները եւ փորձում փախուստ տալ:



Վերջին հաշվով դա կարող է ավելի մեծ սպառնալիք լինել մարդկանց համար», հայտարարել է Լինչ Փաուերսը: Ձերբակալվածներից երկուսին խանութի աշխատողներից մի քանիսը նկատել են երեկոյան մոտ ժամը 10.30-ին մյուս աշխատողների ուշադրությունը շեղել փորձելիս, մինչ երրորդը իբր փորձել է Pin-ի սեղմակը ջեղաշարժել: Չորրորդը դրսում սպասելիս է եղել մեքենայով: «Եթե փորձված հանցագործներ լինեին, այդ վայրերում չէին հայտնվի», ավելացրել է Լինչը, նշելով, որ մինչեւ 200 հազար դոլարի գրավ է նշանակված նրանցից յուրաքանչյուրին ազատ արձակելու դիմաց:

Ներկայիս նրանք փաստաբաններ վարձելու գործընթացում են: Հանցագործությունների համար նրանց ներկայացված է մեղադրանք քրեական օրենսգրքի 4 հոդվածներով, որոնցից յուրաքանչյուրը նախատեսում է մինչեւ 5 տարի բանտարկություն:

Քարտեր «կարդալը» հաճախորդների անձնական տվյալները «գողանալու» միջոցներից մեկն է միայն: Դրանով հանցագործները հնարավորություն են ստանում կամ ապրանքներ գնելու, կամ էլ կանխիկ գումարներ քաշելու բանկերից: Ճիշտ է, բանկերն ու այդ քարտերը մատակարարող ծառայությունները ապահովագրում են իրենց հաճախորդներին նման դեպքերի համար, սակայն նրանց ֆինանսական բաժինների գործադիր ղեկավարները մտահոգվում են, որ նման անախորժությունների հաճախակի կրկնվելու դեպքում հաճախորդները վստահությունը կկորցնեն իրենց նկատմամբ: Կոնկրետ «Ստոդ էնդ շոդի» պարագայում մոտ 1000 հաճախորդներ են տուժել:

Հ. Օ.

Մահացել է պատմաբան Արթուր Շլեզինգերը

Կյանքի 89-րդ տարում վախճանվել է ամերիկացի պատմաբան Արթուր Շլեզինգերը: Պուլիցերյան մրցանակի դափնեկիրը մահկանացուն կնքել է չորեքշաբթի օրը, Նյու Յորքում, ուրբ ինֆարկտից: Շլեզինգերը Քենեդի ընտանիքի հավատարիմ բարեկամներից էր, սառը պատերազմի ժամանակ ամերիկյան լիբերալիզմի կարեւորագույն գաղափարակիրը, ծանուցում է «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե ցայթունգը»:

Նրա հաջողություն գրանցած գրքերից են՝ «Հազար օր» վերնագրված նախագահ Ջոն Քենեդու պատմագրությունը մասին քրոնիկոնը (A Thousand Days), «Ռոբերտ Քենեդին եւ իր ժամանակը» (Robert Kennedy and His Times), նախագահ Էնդրյու Ջեքսոնի պատմագրությունը մասին երկը՝ «Ջեքսոնի ժամանակաշրջանը» (The Age of Jackson):

Արթուր Շլեզինգերը ամերիկյան քաղաքական վերնախավի ամենազդեցիկ մտածողներից էր:

ԼՈՒՍԻՏՈՏ ՀՈՎԱՆԵՍՅԱՆ,
Գերմանիա

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ԳՀԾՁԲ-07/10» ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **«ՀՀ ԿԱ ՀՊԾ Մյասնիկյանի ՀՏ վարչական շենքի սպասարկման ծառայությունների» ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 650 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ», Հ/Հ 247230066158 «Բեջ-գալ» ՍՊԸ-ը հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, Ի.Քոչարյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 16.30-ն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ՄԲԱՇՁԲ-07/58 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար «Տպագրական աշխատանքների» ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 750 ՀՀ դրամ փոխանցել «Կոմունենախագիծ» ՓԲԸ-ի «Արդշինինվեստբանկ» Հ/Հ 247010010343 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 289325, Վ.Հովհաննիսյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրվա ժամը 10.00-ն:

ՄԱՆՈՒՖՈՒՄ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Երեւան քաղաքի Արաբկիրի թաղապետարանը (պատվիրատու) ԵԱԹ-Գ/Հ-ԾՁԲ-14/07 ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **Արաբկիր համայնքի թափառող կենդանիների վնասազերծման ծառայությունների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ փոխանցել «Զարգացման Հայկական բանկ» Հ/Հ 1810052137053312, «Ալասան» ՍՊԸ-ին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից մինչեւ 8-րդ աշխատանքային օրվա ժամը 10-ը դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Զարյան 27, 415 սենյակ, հեռ.՝ 28-13-51, Ն. Մուկուչյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա:

Հայտերը պետք է ներկայացվեն մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից 10-րդ աշխատանքային օրվա ժամը 10-00:

Արաբկիրի թաղապետարան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Երեւան քաղաքի Արաբկիրի թաղապետարանը (պատվիրատու) ԵԱԹ-Գ/Հ-ԱՇՁԲ-9/07 ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **Արաբկիր թաղապետարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ փոխանցել «Զարգացման Հայկական բանկ» Հ/Հ 1810052137053312, «Ալասան» ՍՊԸ-ին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից մինչեւ 8-րդ աշխատանքային օրվա ժամը 12-ը դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Զարյան 27, 416 սենյակ, հեռ.՝ 28-13-51, Ն. Մուկուչյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա:

Հայտերը պետք է ներկայացվեն մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից 10-րդ աշխատանքային օրվա ժամը 12-00:

Արաբկիրի թաղապետարան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Երեւան քաղաքի Արաբկիրի թաղապետարանը (պատվիրատու) ԵԱԹ-Գ/Հ-ԱՊՁԲ-3/07 ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **Արաբկիր համայնքի կարիքների համար մեսաղական աղբարկղերի ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ փոխանցել «Զարգացման Հայկական բանկ» Հ/Հ 1810052137053312, «Ալասան» ՍՊԸ-ին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից մինչեւ 8-րդ աշխատանքային օրվա ժամը 10-ը դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Զարյան 27, 416 սենյակ, հեռ.՝ 28-13-51, Ն. Մուկուչյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա:

Հայտերը պետք է ներկայացվեն մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից 10-րդ աշխատանքային օրվա ժամը 10-00:

Արաբկիրի թաղապետարան

ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի հայաստանյան գրասենյակը երկարացնում է 21.02.2007թ. հայտարարված Սյունիքի մարզի Մեղրի քաղաքում աղբատեղի վերակառուցման եւ սանիտարական մաքրման կազմակերպման նախագծի մրցույթի վերջնաժամկետը մինչեւ մարտի 09, 2007թ., ժամը 17:00:

UNDP

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մրցակցում է **«Ջերմուկ Տուրբոշին» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկ քաղաքի վարչական տարածքում «Ջերմուկ-1» ՓՀԷԿ-ի կառուցման նպատակով:** Արտա գետից ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2007 թ. մարտի 7-ին, ժամը 16-00, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

2 սեն. բնակարան Կիեւյան փողոցում: 63 քմ, 2-րդ հարկ, քարե շենք: 27-01-02, 093062061

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

900 քմ հողատարածք Արաբկիր համայնքում Հեռ. (091) 519-006

ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 1.03.2007 թ.

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Միջին փոխարժեք
USD	1	ԱՄՆ դոլար	353.97
EUR	1	ԵՎՐՈ	467.63
RUR	1	Ռուս. ռուբլի	13.54
GEL	1	Վրաց. լարի	206.64

www.azg.am
www.azgdaily.com

ՀՈՒՅԺԱԳՐ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրած է տպագրության՝ 1.02.2007, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: